

# Ա. Մ Ի Տ Ի Ւ

ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԸ  
ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ-ԼԵՆԻՆՑԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԹԽԱՐՀԱՅԱՑՔՆ Ե

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԳՈՐԾԱՎԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

31 JAN 2018

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

ԽՍԴ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ. ՄԻՏԻՆ

ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԸ  
ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ-ԼԵՆԻՆՑԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔՆ Ե

Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ԴԻԱԼԵԿՏԻԿԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄԸ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ-ԼԵ-  
ՆԻՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՀԱՅԱՅԻՆ Ե

«Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմության համառոտ դասընթացը» պատկանում է մարքսիստական-լենինյան թեորիայի նշանավոր աշխատությունների թվին։ Այդ գիրքը մտել է բոլշևիզմի իդեալան վոսկե փոնդի մեջ։ Ստալինյան իմաստությամբ ու խորությամբ շարադրված «Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմության համառոտ դասընթացը» առաջ է գիտական ընդհանրացումը պատմական այն ուղղու, վոր անցել է բոլշևիկների մեծու փառականծ կուսակցությունը։ Այդ ուղին—իր հեղափոխական փորձի հարստությամբ, պատմական նոր եպոսայի համար բնորոշ դասակարգացին պայքարի լարվածությամբ, այդ պայքարի ձևերի բազմազանությամբ, պատմական այն շարժումների մասշտաբով, վորոնց առջեկց ընթացել է և ընթանում է բոլշևիկյան կուսակցությունը, իր փառական նվաճումներով—չի կարող համեմատվել վոչ մի բանի հետ։

«Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» «Ներածության» մեջ ամփում է, վոր Համկ(բ)կ պատմությունը՝ զայերեք հեղափոխությունների՝ 1905 թ. բուրժուատ-զեւուկրատական հեղափոխության, 1917 թ. Փետրվարի բուրժուատ-զեւուկրատական հեղափոխության, 1917 թ. Հոկտեմբերի սոցիալիստական հեղափոխության պատմությունն է։ Այնուհետև այնտեղ մատնանշվում է, վոր Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմությունը՝ զայարիզմի տապալման, կապիտալիստների ու

1 ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայության բնութագությունների կարգացած լեկցիոնների ու

Մ. МИТИН  
ДИАЛЕКТИЧЕСКИЙ  
МАТЕРИАЛИЗМ—МИРОВОЗЗРЕНИЕ  
МАРКСИСТСКО-ЛЕНИНСКОЙ ПАРТИИ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1939



11-284039/

կալվածատերերի իշխանության տապալման, «տարերկը» ինտերվենցիայի ու պրոլետարական դիլտատուրայի թշնամիների մի ամբողջ բազմության ջախջախման պատմությունն ե, Խորհրդային պետության ու սոցիալիստական հասարակության կառուցման պատմությունն ե: Հենց միայն այդ, ճշմարիտ վոր՝ վիթխարի, համաշխարհային նշանակություն ունեցող իրադարձությունների թվարկումը ցույց է տալիս, թե ի՞նչքան մեծ ե բոլշևիկյան կուսակցության դասակարգային պայքարի լարորատորին: Այդ պայքարի բոլոր ետապներում Լենինի—Ստալինի կուսակցությունը ղեկավարվել ու ղեկավարվում ե դիտական կոմունիզմի ուսմունքով, մարքսիզմ-լենինիզմի թեորիայով: Լենինն ասում եր, վոր Մարքսի ուսմունքն ամենակարող ե, վորովհետեւ այն ճիշտ ե: Այդ ուսմունքը ճիշտ ե, վորովհետեւ այն տալիս ե որյեկտիվ իրականության զարդացման որինաչափությունների ճիշտ ըմբռումը: Նա զինում ե հասարաչափությունների ճիշտ ըմբռումը: Նա զինում ե համարկական զարդացման որենքների իմացությամբ և դրա համար ել հիանալի զենք ե հանդիսանում այդ իրականությունը իսկապես հեղափոխական վորով, կոմունիզմի վորով փոփոխելու համար: Աեկավարվելով այդ ուսմունքով, պատմական զարդացման որենքների իմացությունն ունենալով, իր ձեռքում իդեալան այդպիսի հզոր գենք ունենալով, զինված մինելով այնպիսի կողմնացույցով, վորովիսին մարքսիզմ-լենինիզմի թեորիան ե, բոլշևիկների կուսակցությունը պատվով ե գուրս յեկել ու գուրս ե զալիս պատմական այն բոլոր փորձություններից, վորոնք ընկել են ու ընկնում են նրան բաժին: Կուսակցությունն այդ թեորիայի դրոշի ներքո ավելի ու ավելի համախմբում ե ժողովրդական մասսաներին ու հաստատորեն զնում ե ղեպի իր վերջնական նորմակը:

«Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության պատմության համառոտ զամանակացը» շատ բանով տարբերվում ե կուսակցության պատմության մասին յեղած զասադրքերից, վորոնք մինչև այժմ գործածության մեջ ելին: Բոլշևիկյան կուսակցության պատմության տվյալ դասընթացի արմատական տարբերությունը կայանում ե դասընթացի վոր նա հաղեցված ե թեորիական մեծ բովանդաւում, վոր

կությամբ: Այդ գրքի մեջ բացառիկ ուշադրություն ե նվիրված դիլտեկտիկական ու պատմական մատերիալիզմի հարցերին: Այլ կերպ ել լինել չեր կարող, վորովհետեւ, ինչպես այդ ձեւակերպված ե «Համականի պատմության համառոտ դասընթացի» մեջ, դիլտեկտիկական մատերիալիզմը մարքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայացքն ե, դիլտեկտիկական ու պատմական մատերիալիզմը կաղմում են կոմունիզմի թեորիական Փունդամենտը, մարքսիստական կուսակցության թեորիական հիմունքները:

Այս լեկցիայի թեման՝ «Դիմակատիկական մատերիալիզմը վորովիս մարքսիստական-լենինյան կուսակցության աշխարհայացք»—շատ մեծ է: Յես կահմանափակվեմ հետևյալ յերեք հարցերով. 1) Ինչ բան ե դիլտեկտիկական մատերիալիզմը և ինչպես ե նա ծագել, 2) ինչպես ե մեր կուսակցությունն իր ամբողջ պատմության ընթացքում պայքարել այդ աշխարհայացքի համար, պաշտպանել նրա հստակությունը և 3) ինչպիսի դեր ե խաղում դիլտեկտիկական մատերիալիզմը, իբրև բոլշևիկյան կուսակցության աշխարհայացք, իբրև միակ դիտական մեթոդ զասակարգային պայքարի կարևորագույն հարցերի լուծման ժամանակ:

## I

Աշխարհայացքը, ինչպես ինքը բառն ե ասում, աշխարհի նկատմամբ ունեցած հայացք ե, դիտում, մարդուն շրջապատող բնության բոլոր յերեւույթների և մարդկային հասարակության ըմբռում: Մարդուն շրջապատող աշխարհի բարձագան յերեւույթները հասկանալու համար, բնության ու մարդկային պատմության յերեւույթների բարդ ու խայտարկեած շղթան միասնական հասկացողությամբ ընդգրկելու համար, նրանց զարդացման որինաչափությունները ըմբռունելու համար՝ անհրաժեշտ ու ունենալ ներդաշնակ, ամբողջական, ավարտուն աշխարհայացք: Աեղափոխական դործիչի համար պարզ, ներդաշնակ աշխարհայացքն առանձնապես անհրաժեշտ ե այն պատճառով, վոր հասարակական կյանքում նրա պրօռունեյությունը

պետք ե ճիշտ լինի, պետք ե ընթանա պատմական պրոդրեսով զարգացման վողով։ Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների յերկասիրություններում մենք ունենք խորը մտքեր հեղափոխական գործունելյության համար հեղափոխական աշխարհայացքի ունեցած դերի ու նշանակության հարցի մասին։

Դրա վորոշ ըմբռնումը ունեյին նաև մարդկային առաջավոր մտքի այնպիսի մեծ ներկայացուցիչներ, ինչպիսիք են ուստի հեղափոխական գեմոկրատներ՝ Զերնիշնակին ու Դոբրոլյուրովը։ Զերնիշնակին «Օչերք ից քաղաքական էկոնոմիա»-ի մեջ գրել ե. «...Ով վոր տրամաբանական ամբողջ լիակատարությամբ ու հետեղականությամբ չի պարզել սկզբունքները, նրա զվարակում վոչ միայն շփոթ ե, այլև անհեթեթություն և գործերի մեջ»<sup>1</sup>։ Իրեն հատուկ ամբողջ խորությամբ ու պայծառությամբ Զերնիշնակին ձևակերպում ե պարզ թեորիայի ու ճիշտ պրակտիկայի միջև յեղած կապի հարցը։ Պրակտիկայում, գործունելյության մեջ, անհեթեթություն չինելու համար հարկավոր ե, վոր պարզաբանվեն «տրամաբանական ամբողջ լիակատարությամբ սկզբունքները», այլ կերպ ասած՝ հարկավոր ե ունենալ ներդաշնակ, ավարտուն աշխարհայացք։

Այդ նույն հարցի մասին կա Դոբրոլյուրովի հետեյալ հիմնալիք ասույթը։ Նա գրել է. «Ստանալով հասկացողություն ընդհանութիւն մասին, այսինքն, այն մշտական որենքների մասին, վորոնցով ընթանում ե ժողովուրդների պատմությունը, ընդլայնելով իր աշխարհայեցողությունը մինչ մարդկության ընդհանութիւն կարիքների ու ոլահանջմունքների ըմբռնումը՝ կրթված մարդն անպայմանական ցանկություն ե զգում իր թեորիական հայացքներն ու համարդունքները փոխադրել պրակտիկ գործունելյության սֆերան»<sup>2</sup>։ Դոբրոլյուրովը, ինչպես մենք տեսնում ենք, գտնում ե, վոր մարդը, վոր ունի ամարտառուն աշխարհայացք, վոր տիրապետում ե հասարակական զարգացման որենքների հասկացողությա-

նը, անխուսակիելիորեն ձգտում ե իր հայացքներն ու իդեաները փոխադրել պրակտիկ գործունելյության սֆերան։

Զերնիշնակին ու Դոբրոլյուրովը մարքսիստ չեն յեղել։ Ասուելով աշխարհայացքի մասին, նրանք, իհարկե, նկատի չունեյին մարքսիստական աշխարհայացքը։ Բայց, իբրև հեղափոխական դեմոկրատներ, նրանք՝ ցարական Ռուսաստանի պայմաններում ձգտում ելին հեղափոխական պրակտիկ գործունելյության և շատ լավ ելին հասկանում, վոր այդ հեղափոխական գործունելյության պրակտիկ գործում ե վողեորի ու վողենչի իդեական իմաստով, հեղափոխական աշխարհայացքով։

Մարքսի ու Ենդելսի, Լենինի ու Ստալինի մոտ մենք գտնում ենք հիմնալիք տողեր, վորոնք նվիրված են այն հըսկայական դերին ու նշանակությանը, վոր ունի ավարտուն, հետեղական աշխարհայացքը, գտնում ենք խորն ասույթներ՝ հեղափոխական պրակտիկայի համար հեղափոխական թեորիայի ունեցած նշանակության վերաբերյալ։ Յերիտասարդ Մարքսը, յերբ նա դեռ նոր եր մշակում իր հայացքները, արտահայտեց այն միտքը, թե փիլիսոփայությունը պրոլետարիատի մեջ գտնում ե իր մատերիալ զենքը, ինչպես և պրոլետարիատը՝ փիլիսոփայության մեջ ձեռք բերում իր հոգեկան զենքը։

Լենինը գրում եր.

«Միայն Մարքսի փիլիսոփայական մատերիալիզմը ցույց տվեց պրոլետարիատին հոգեռոր ստրկությունից դուրս գալու յեւքը, վորի մեջ մինչև որս սառած մնում ելին բոլոր ձնչված դասակարգերը։ Միայն Մարքսի տնտեսական թեորիան պարզաբանեց պրոլետարիատի խկական դրությունը կապիտալիզմի ընդհանուր հասարակակարգի մեջ»<sup>1</sup>։

Ընկեր Ստալինը դեռ 1906 թ. իր «Անարխիզմ, թե սոցիալիզմ» հոդվածաշարքում գրում եր.

«Մարքսիզմը միայն սոցիալիզմի թեորիան չե, դա մի ամբողջական աշխարհայացք ե, փիլիսոփայական մի սիստեմ, վորից տրամաբանորեն բղխում ե Մարքսի պրոլետարական սոցիալիզմը։ Այդ փիլիսոփայա-

1 Հ. Գ. Չերնիշևսկի, Избранные сочинения, т. II, стр. 435, 1937.

2 Հ. Ա. Դօքուլյով, Полное собрание сочинений, т. III, стр. 227, ГИХЛ, М., 1936.

1 Անդրեասիստենտ, հ. XVI, 42 353:

կան սիստեմը կոչվում է դիալեկտիկական մատերիալիզմի բիալիզմ՝<sup>1</sup>

Մեր աշխարհայացքը, դիալեկտիկական մատերիալիզմի աշխարհայացքը, ամենից առաջ մոնիթուական աշխարհայացք է: Ի՞նչ է նշանակում դա: Մոնիզմ՝ ծաղում և հունական «մոնոս» բառից, փոր նշանակում է «մեկ», «միակ»: Մոնիթուական—այդ նշանակում է այնպիսի աշխարհայացք, փոր աշխարհի, բնության, հասարակության, մարդկային պատմության բոլոր յերեսութների ըմբռնման հիմքում դնում է միասնական սկզբունք, միասնական տեսակետ: Մեր աշխարհայացքն իբրև մոնիթուական աշխարհայացք դրանով իսկ արժատական կերպով տարրերվում է ամեն տեսակի եկլեկտիկական կամ դուալիստական աշխարհայացքներից, վորոնք անչափ շատ են յեղել փիլիսոփայության զարգացման պատմության մեջ և վորոնք դեռ այնքան շատ դոյություն ունեն և այժմ: Փիլիսոփայական այդ ուսմունքները ընության ու պատմության ըմբռնման հիմքում դնում են մեկ կամ միքանի փոխադարձաբար բացառող սկզբունքներ: Նրանք շփոթում, խառնում, զուգակցում են յերկու կամ բազմաթիվ տարրեր սկզբունքներ աշխարհը ըրջապատող յերեսութներին մոտեցում ունենալու մեջ:

Հավաստելով, վոր մեր աշխարհայացքը մոնիթուական և հանդիսանում, մենք, սակայն, դեռ շատ քիչ բան սասացինք: Բանը նրանումն է, վոր դոյություն ունեն ինչպես իդեալիստական, այնպես ել մատերիալիստական ուղղությունների մոնիթուական փիլիսոփայական բազմաթիվ սիստեմներ: Մեր աշխարհայացքը վոչ միայն մոնիթուական է, այլև մատերիալիստական է: Այն սկզբունքը, այն միասնական տեսակետը, միասնական յելակետը, վորից մենք մեկնում ենք աշխարհի ըմբռնման մեջ,—դա մատերիալիզմի սկզբունքն է:

Յեթե համառոտակի բնութագրենք այդ սկզբունքը, առաջ այն կայանում և հետեւյալում. մատերիա, բնություն, ուսակ ոբյեկտիվ աշխարհ, կյանք, կացություն—ահա թե

1 Ստուին, «Անարթիզմ, թե սոցիալիզմ»: Մեջբերված է ըստ Բերբեյիք Անդրկովկասի բուհեկայան կազմակերպությունների պատմության հաբցի շուրջը» գրքի, եջ 115, Հայկուհրատ, եջ 97:

վորն է հանդիսանում հիմունքը, առաջնայինը. իսկ գիտակ-յությունը, մատածողությունը կամ ընդհանրապես հոգեկանը հանդիսանում է յերկրորդայինը, վորն ածանցվում է այդ հիմքից: Բնությունը, մատերիան գոյություն ունեն վորեւ գիտակցությունից դուրս ու անկախ: Գիտակցությունը յերեան է գալիս մատերիայի զարգացման շատ բարձր աստիճանում: Միաբար մարդկային ուղեղի գործունեցության արգյունք է,—ուղեղի, վոր իրենից ներկայացնում է պատմական զարգացման շատ յերկար ուղղ չնորհիվ ստեղծված մատերիայի կատարյալ կազմակերպությունը: Մատերիալիզմի սկզբունքն արմատապես տարբերվում է ամբողջովին հակադիր և իդեալիզմի սկզբունքին:

Իդեալիզմի սկզբունքը կայանում է նրանում, վոր միտքը, գիտակցությունը,—մի խոսքով, հոգեկանը (տարբեր իդեալիստների մոտ այդ հոգեկանը, վորը վեր է ածված առաջնակղթի, տարբեր անուններ ե կրում, «լոգոս», «բացարձակ իդեա», «համաշխարհային վոգի», «իմ զգացումների միակցությունը» և այլն) հանդիսանում է առաջնայինը, ընկած է ամենի հիմքում, իսկ մատերիալ աշխարհը, բնությունը, իրական կյանքը, պատմությունը վոչ այլ ինչ են, քան յեթե յերկրորդայինը՝ ածանցված այդ հոգեկանից: Այս ամենաընդհանուր բնութագրումից յերեսում է, վոր ամեն տեսակի իդեալիզմը (նրա ձեւերի տարբերությունը միանգամայն անելական է. կարմիր սատանան, ինչպես այդ նշել է Վաղիմիր Խլիբչ Լենինը, վոչնչով չի տարբերվում կապույտ կամ կանաչ սատանայից) խունկ է բուրում, ըստ ելության վոչնչով չի տարբերվում կրոնից, թեոլոգիական տեսակետից: Ընդհակառակը, մատերիալիզմը, աշխարհի բոլոր յերեսությունների մեկնաբանության մատերիալիստական թեորիան, վերջ է դնում կրոնական միստիկային, խավարամտությանը, ամեն տեսակի տերտերականությանը:

Սակայն մենք դեռ ամեն ինչ չենք ասել, ինչ հարկավոր է մեր աշխարհայացքի ընդհանուր բնութագրման համար: Փիլիսոփայության զարգացման պատմության մեջ գոյություն են ունեցել մատերիալիզմի զանազան տեսակներ, մատերիալիստական զանազան դպրոցներ. XVIII դարի մեջնահստական մատերիալիզմը, Ֆոյերբախի արտրակությանը,

յեցողական մատերիալիզմը, Բյուլների, Ֆոդորի, Մոլեշոսի  
վուլգար մատերիալիզմը, արդի մեխանիստական մատերիա-  
լիզմը և այլն: Մեր աշխարհայացքն իր մեթոդով, մատե-  
րիալ աշխարհի իր մոտեցմամբ հանդիսանում է դիալեկտի-  
կական, և հենց դրանով ել նա տարբեր է վերևում թվար-  
կած մատերիալիզմի բոլոր տեսակներից:

Ի՞նչ է նշանակում դիալեկտիկական մոտեցումը բնու-  
թյան յերևույթներին: Մատերիան, վորը մեր կողմից դըր-  
վում ե հիմքում, չի դառնվում լացած, անշարժ վիճակում,  
այլ զարգանում է դիալեկտիկական որենքներին համաձայն:  
Այդ որենքների եյությունը կայանում է նրանում, վոր աշ-  
խարհն անընդհատ շարժման, փոփոխման, զարգացման  
մեջ և գտնվում: Բնության բոլոր յերևույթները մեկը մյու-  
սից մեկուսացված չեն, այլ դառնվում են անխպելի կապի և  
փոխներգործման մեջ: Զարգացումը տեղի յեւնենում հա-  
մաձայն այն որենքի, վորով դանդաղ, աննշան, քանակային  
փոփոխությունները թուիչքի միջոցով վերջիվերջո հասցը-  
նում են վորակական կարգի փոփոխությունների: Բնության,  
պատմության զարգացումն ընթանում է հակադրություննե-  
րի պայքարի հետևանքով: Ահա ամենաընդհանուր ձևով  
դիալեկտիկական զարգացման այն որենքների բնութագրու-  
թիւ վորոնք հատուկ են մատերիային ու մտածողությանը:  
մը, վորոնք հատուկ են մատերիային ու մտածողությանը:

«Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ  
դիալեկտիկական մատերիալիզմը վորպես աշխարհայացք  
բնութագրված է հետեւյալ կերպ.

«Նա (այդ աշխարհայացքը—Մ.Մ.) դիալեկտիկա-  
կան մատերիալիզմ է կոչվում այն պատճառով, վոր  
նրա մոտեցումը բնության յերևույթներին, բնության  
յերևույթների ուսումնասիրման նրա մեթոդը, այդ  
յերևույթների ճանաչողության նրա մեթոդը դիալե-  
տիկական ե, իսկ բնության յերևույթների նրա մեկ-  
նաբանությունը, բնության յերևույթների նրա ըմ-  
բռնումը, նրա թեորիան—մատերիալիստական ե»<sup>1</sup>:  
Դիալեկտիկական մատերիալիզմի ստեղծողներն եյին դի-

<sup>1</sup> «Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթաց», եջ 99—100,  
Հայքագրատ, եջ 140:

տական կոմունիզմի հիմնադիրները—Մարքսն ու Ենդելսը:  
Պրոլետարիատի մեծ ուսուցիչները ստեղծեցին դիտական կո-  
մունիզմի թեորիան, վորը բանվոր դասակարգին զինեց կա-  
պիտալիզմի տապալման և կոմունիստական հասարակության  
կառուցման հաղթական գենքով: Դիտական կոմունիզմի թեո-  
րիան պարզաբանեց բանվոր դասակարգի հաղթանակը  
կիրկի մարդկությունը ձեռշումից և կապիտալիստական շա-  
հագործումից:

Վերը մենք քաղվածք բերինք ընկեր Ստալինի՝ 1906 թ.  
վրած «Անարխիզմ, թե սոցիալիզմ» հոդվածաշարքից՝ քաղ-  
վածք, վորի մեջ ատլած է, թե դիալեկտիկական մատե-  
րիալիզմից տրամաբանութեն բղիում է Մարքսի պրոլետարա-  
կան սոցիալիզմը: Դիալեկտիկական մատերիալիզմը և դի-  
տական կոմունիզմն որդանապես մեկը մյուսին կապված են—  
մեկը առանց մյուսի աներկացյալի յէ: Յեվ իսկապես—նա,  
ով մինչև վերջը հանդիսանում է հետեւղական դիալեկտիկ  
մատերիալիստ, նա, տվյալ փիլիսոփայական աշխարհայաց-  
քից անելով տրամաբանական բոլոր հետեւթյունները,  
անխուսափելիորեն պետք է հանդի դիտական կոմունիզմի  
բոլոր հայցների սիստեմին և բոլշևիզմի վորով հե-  
ղափոխական պրակտիկ գործունեյության: Մյուս կողմից,  
նա, ով իսկապես ուզում է կանոններ դիտական կոմունիզմի  
հողի վրա, նա պետք է լինի դիալեկտիկ մատերիալիստ:  
Մարքսիզմը, ասել է Լենինը, իրենից ներկայացնում է հա-  
յացքների ներդաշնակ, ավարտուն մի սիստեմ, վորը կազմ-  
ված է յերեք բաղկացուցիչ մասերից՝ մարքսիզմի վիլիսո-  
փայությունից (դիալեկտիկական մատերիալիզմից), Մարքսի  
տնտեսական ուսմունքից և սոցիալիզմի, դասակարգային  
պայքարի տրամատեղիայի ու տակտիկայի ուսմունքից: Այդ  
յերեք բաղկացուցիչ մասերից դիալեկտիկական մատերիա-  
լիզմը, Լենինի արտահայտությամբ, հանդիսանում է մարք-  
սիզմի թեորիական արմատական հիմքը: Դիալեկտիկական ու  
պատմական մատերիալիզմի՝ վորպես մարքսիզմի թեորիա-  
կան Փունդամենտի բնութագրումը, վոր տրված է «Համ-  
եկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ, իրենից

ներկայացնում և լենինյան այդ բնութագրման շարունակություն ու զարդացումը:

Մարքսն ու Ենդելսը դիալեկտիկական մատերիալիզմին հանդեցին մեծ, լարված, կրքոտ իդեալան պայքարի հետեւանդով: Մարքսի ու Ենդելսի փիլիսոփայական աշխարհայացքի ձևակորման պատմությունն իրենից ներկայացնում է մի տարբեգրություն, վորը հագեցված և իդեալան հարստագույն բովանդակությամբ, մասնավորապես Հեղելի դիալեկտիկայի իդեալիստական բնույթի ու Ֆոյերբախի մատերիալիզմի թերությունների հաղթահարման պայքարով: Մարքսն ու Ենդելսը քննադատության յենթարկեցին յերիտասարդ հեգելականների, այսպես կոչված գերմանական «ճշմարիտ ուղիականների», Փոյելիսոփայական հերուրանքները, սոցիալիզմի ուստոպիական սիստեմները, Պրուդոնի մանր-բուրժուական ուսմունքը և այլն: Դրա համար ել, վորպեսզի հասկանանք Մարքսի ու Ենդելսի հայացքների եյտթյունը, դիալեկտիկական մատերիալիզմի բովանդակությունը, հարկավոր և, թեկուղ ամենահակիրճ ձևով, ծանոթանալ իդեալական այդ հարուստ զարդացմանը:

Մարքսի ու Ենդելսի փիլիսոփայական հայացքների ձևավարման մեջ կենտրոնական ողակները հանդիսանում են նրանց կողմից Հեղելի իդեալիստական դիալեկտիկայի ու Ֆոյերբախի մատերիալիզմի սահմանափակությունների քըննաղատությունը: Ահա թե ինչու «Համկ(բ)կ պատմության Համառոտ գասընթացի» մեջ դիալեկտիկական մատերիալիզմի իրեն մարքսիստական-լենինյան կրուսակցության աշխարհայացքի՝ ընդհանուր բնութագրումից հետո ասկում է այն կապի ու զրա հետ միասին այն տարբերության մասին, վորոնք գոյություն ունեն Մարքսի ու Ենդելսի հայացքների և նրանց նախորդների՝ Հեղելի ու Ֆոյերբախի հայացքների միջև: «Համկ(բ)կ պատմության Համառոտ գասընթացի» մեջ առված է.

«Իրենց դիալեկտիկական մեթոդը բնորոշելով, Մարքսն ու Ենդելսը սովորաբար վկայակոչում են Հեղելին, վորպես մի փիլիսոփայի, վորը ձևակերպել ե դիալեկտիկայի հիմնական գծերը: Մակայն այդ չեղանակում, թե Մարքսի և Ենդելսի դիալեկտիկան

նույնական և Հեղելի դիալեկտիկային: Իրականում Մարքսն ու Ենդելսը Հեղելի դիալեկտիկայից վերցրել են նրա միայն «ռացիոնալ հատիկը», ունի գցելով հեղելյան իդեալիստական կեղելը և շարունակելով զարդացնել այդ դիալեկտիկան՝ նրան արդիական դիտական տեսք տալու համար»<sup>1</sup>:

Գերմանական իդեալիստ-փիլիսոփա Հեղելը (1770—1831) հանդիսանում է մարդկապին մտքի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը: Հեղելը մեծ ազդեցություն ունեցավ Գերմանիայի, այլև ուրիշ յերկրների, իդեալական դարձացման վրա: Մեծ եր Հեղելի ազդեցությունը նաև մեզանում՝ Ուուսատանում: Անցյալ դարի 40-ական թվականներին Սոսկիլայում, որինակ, նույնիակ ասացվածք եր պատում, թե «Սոսկիա գետի ափերով անցնել չի կարելի Հեղելի փիլիսոփայությունից»: Այդ այն ժամանակաշրջանըն եր, յերբ ուստ ինտելիգենցիայի առաջավոր խավերը խմբակներում զրագված եյին Հեղելի փիլիսոփայության ուսումնասիրությամբ, վիճում եյին այդ փիլիսոփայության մասին, ջանում եյին այդ փիլիսոփայի մտքերը կիրառել «ուսասական անիծված իրականության» նկատմամբ:

Հեղելյան փիլիսոփայությունը, ինչպես նաև ամեն մի այլ փիլիսոփայություն, իրենից ներկայացնում է իր եպոնայի արգասիքը: Ինքը Հեղելին ասում էր, թե ամեն մի փիլիսոփայություն իր ժամանակի մտավոր արտահայտությունն է: Հեղելի փիլիսոփայությունն ամել և պատմական վորոշ եպոնայում, այն Ե՝ XIX դարի առաջին յերեսնամյակում: Անցյալ դարի 30-ական թվականները՝ ըստ առաջիններ եյին, յերբ Հեղելի ազդեցությունը Գերմանիայում հասավ իր գաղաթնակետին: Այդ, Ենդելսի խոսքերով ասած, Հեղելյան փիլիսոփայության հանդիսավոր յերթն եր: Հեղելի փիլիսոփայությունը, արդյունք լինելով այդ ժամանակաշրջանի Գերմանիայի պատմական ու կուլտուրական վորոշ պայմանների, իրենից, սակայն, ներկայաց-

1 «Համկ(բ)կ պատմության Համառոտ դասընթաց», եջ 100, Հայուղիքատ, եջ 140:

նում և ել ավելի լայն յերևույթ, իդեոլոգիայի բնադավա-  
ռում համաշխարհային կարգի յերևույթ:

XVIII դարի վերջը և XIX դարի սկզբը Յեղոպայի  
գարդացման մեջ վերին աստիճանի հեղափոխական ժամա-  
նակաշրջան եր Հանդիսանում: Ֆրանսիայում տեղի յեր-  
ունենում հեղափոխական հսկայական շարժում—Փրանսա-  
կան 1789 թվի բուրժուական հեղափոխությունը: Ֆրան-  
սական բուրժուազիան գրոհում եր ֆեոդալիզմի ամրու-  
թյունների վրա, հեղափոխական տեսոր եր կազմակերպում  
աղնվականության դեմ, պատերազմում եր ամբողջ աշխար-  
հի ֆեոդալական ուսակցիայի դեմ: Ֆրանսիայում քաղաքա-  
կան պայքարի մեջ զրավրեցին ժողովրդական ամենալայն  
մասսաները: Նապոլեոնը, պահպանելով միայն ֆրանսա-  
կան հեղափոխության այն արդյունքները, վոր շահավետ  
ելին խոչը բուրժուազիային, այդ եսուխայում իր հաղ-  
ության մարզերն եր կատարում ամբողջ Յեղոպայում: Բական  
Այդ եսուխային ե վերաբերում նապոլեոնի արշավանքը  
Ռուսաստանի վրա: Մենք զիտենք, թե ինչպես բարձրացակ  
ուուս ժողովուրդը նապոլեոնի հրոսակամբերի դեմ, ուսար-  
ուուս ինտերվենտների դեմ, և թե ինչպես նա 1812 թ.  
երկրյա ինտերվենտների դեմ, և թե ինչպես այդ հրոսակա-  
հայրենական պատերազմի մեջ վոչնչացրեց այդ հրոսակա-  
հայրենական նույրադությունները, վոր տե-  
խմբերին: Խոչորագույն իրադարձությունները, վոր տե-  
խմբերին ունենում Յեղոպայում, առաջ ելին բերում բոլոր  
զի ելին գումարում նապական առաջարկությունները չելին  
հիմքերի ցնցումները: Այդ իրադարձությունները չելին  
կարող չհուզել այն ժամանակվա Յեղոպայի մաքերը, չելին  
կարող իրենց վրա չդրամել փիլիսոփայության խոչորա-  
գույն ներկայացուցիչների լայն ուշադրությունը:

Հեղելը ստեղծեց թեորիական վեհապանծ կառուցված-  
քը: Նրա աշխարհայացքի վրա, անկասկած, արտահայտ-  
քը: Նրա աշխարհայացքի վրա, անկասկած, արտահայտ-  
քը: Վեցին այդ եսուխայի բուռն իրադարձությունները: Յերբ  
մենք ուսումնասիրում ենք Հեղելի գիտելիքան, նրա  
ուսմունքը՝ հեղափոխական թոփչքների մասին, քանակը  
վորակի փոխարկվելու մասին, նրա ուսմունքը հակադրու-  
թյունների պայքարի մասին, մենք, առանց կասկածի, այդ  
գիտելիքի մաս տեսնում ենք այդ ժամանակի հեղա-  
դական, թոփչքակերպ իրադարձությունների կնիքը:

Բայց Հեղելը, իր փիլիսոփայության մեջ արտացոլելով  
այդ պրոցեսները, նրանց տալով փիլիսոփայական այդպիսի  
լայն ընդհանրացումներ, դրա հետ միասին չկարողացալ  
կարգել իր հողից, վորի վրա նա ամեն եր, ապրել ու գոր-  
ծել: Հեղելը գերմանացի յեր, ծնվել ու ստեղծագործել եր  
Գերմանիայում, նա աճող բուրժուական կարգերի իդեոլոգն  
եր մի յերկրում, վորի մեջ բուրժուազիան սահմանափակ-  
ված եր ֆեոդալական կարգի մի ամբողջ շարք չափազանց  
նշանակելի մնացորդներով:

Գերմանիան այն ժամանակ ֆրանսիայի ու Անգլիայի  
համեմատությամբ հետամնաց յերկիր եր: Բուրժուական  
զարգացումը նրանում դեռ իր առաջին հաջողություններն  
եր ունենում: Նա մասնատված եր մեծ քանակությամբ մանր  
ֆեոդալական իշխանությունների, նա կտրտված եր ամեն  
տեսակի մաքսային պատնեշներով: Գերմանական բուրժուա-  
զիան կարող եր միայն յերազել այն մասին, ինչ փաստորեն  
արդեն կատարում եր անդիմական ու ֆրանսական բուրժու-  
ազիան: Գերմանական բուրժուազիան սողում եր ֆեոդալա-  
կան միավետների ու իշխանիկների առջև, նա չեր կարող  
քիչ թե շատ ուղղվեցիոն լայն գործունեյություն ժավալել  
ուրապետող ֆեոդալական ուսակցիայի վերաբերմամբ: Դրա  
փոխարեն մտքի բնագավառում, իդեոլոգիական գործունե-  
յության տարրեր բնագավառներում նա բարձրացավ շատ  
վեր: Նա պատմության ասպարեզ առաջ քաշեց զբականու-  
թյան ու փիլիսոփայության մեծաղույն ներկայացուցիչնե-  
րին: Մարքոն ասում եր Կանտի, Հեղելի նախորդներից մեկի  
փիլիսոփայության մասին, թե նա իրենից ներկայացնում է  
ֆրանսական հեղափոխության զերմանական թեորիան:  
Մարքոն այդ բնութագրումը լիակատար իրավունքով կարելի  
յի վերաբերել գերմանական կլասիկ փիլիսոփայության ամ-  
բողջ զարգացմանը՝ սկսած Կանտից մինչև Հեղել: Ենդեւը  
«Լուգլիդ Ֆոյերբախ» իր աշխատության մեջ գրում եր.

«...Հեղելը գերմանացի յեր և, իր ժամանակակից  
դյոթելի նման, կարգին փիլիսոփեր եր: Հեղելը, ինչ-  
պես և Գյոթեն, իր բնագավառում իսկական ոլիմ-  
պիական Զես եր, բայց վոչ մեկը և վոչ մյուսը չկա-

բողացան լիովին ազատվել գերմանական Փիլիսոփերության վոգուց»<sup>1</sup>:

Հեղելը, հեղափոխական դիալեկտիկայի ստեղծողը, դրա հետ միասին հանգեց գերմանական կարգերի լիակատար արդարացմանը, Ֆրիդրիխ-Վիլհելմ III-ի ճորտատիրական պրուսական միավետության լիակատար արդարացմանը:

Ենդելը հետեւյալ նշանավոր խոսքերով ե բնութագրում դյուքսին:

«...Գյոթեն մերթ վիթխարիորեն մեծ է. մերթ մանրախնդիր, մերթ ըմբոստ, ծաղրող, աշխարհը արհամարհող հանձար է, մերթ զգույշ, ամենից դոչ, նեղ Փիլիսոփեր: Յել Գյոթեն անզոր յեղավ հաղթելու գերմանական վողորմելիությունը. ընդհակառակը՝ վերջինս հաղթում է նրան»<sup>2</sup>:

Գյոթեն, ասում եյին Մարքսն ու Ենդելը,—մերթ հզոր պոետ է, մերթ վայմարյան աննշան մինխոտը: Այդ բնութագրումը, վոր տրված ե Գյոթեյին, անզայմանորեն կիրառելի յենակելի նկատմամբ: Հեղելը—վիթխարագույն դիմումիկ է, փիլիսոփայական խոչոր սիստեմ ստեղծող, մի սիստեմ, վորն ազգեցություն գործեց դիտական բոլոր ճյուղերի զարգացման վրա, և դրա հետ միասին Հեղելը—այդ մի մարդ է, վորը սողում ե պրուսական Փեողալիզմի առջև, ցածրանում ե համարյա նրա հանդեպ մինչև ստորաքարչության աստիճանի հասնելու, մի մարդ, վորն ամբողջովին վարակված ե պրուսական չինովնիկության վողորմելի ամբարտավանությամբ, վորն իր կանցելարական սահմանափակածությամբ արհամարհանքով ե վերաբերվում ժողովրդի կարծիքին: Հեղելի մոտ մտածողության հեղափոխական դիալեկտիկան մեթոդը հանդեցրեց քաղաքական ռեակցիոն յեղակացությունների: Հեղելը—դիալեկտիկան, այդ, Հերցենի արդարացի արտահայտությամբ, «հեղափոխության հանրահաշիվն» ստեղծողը, և դրա հետ միասին ավարտուն իդեալիստական սիստեմ, «աբորիուտ» որյեկտիվ իդեալիզմ ստեղծողն է:

1 Ֆ. Ենդել, Լուդվիգ Ֆոյերախ, եջ 10, Գոսպուտիզդատ, 1938:

2 Կ. Մարքս և Փ. Էնգելս, Ըստ., տ. V, սր. 142.

Հեղելի փիլիսոփայության մեթոդի ու սիստեմի միջնադար հակասությունը հանդիսանում է Գերմանիայի զարգացման պայմանների հակասականության, այդ եպօխայի գերմանական բուրժուազիայի դրության հակասականության արտացոլումը:

Հենց սկզբից ևեթ պետք է ասել, վոր յերբ մենք խոսում ենք Հեղելի մոտ յեղած մեթոդի ու սիստեմի հակասության մասին, ապա այդ չի կարելի պարզեցրած կերպով հասկանալ, թե իրը Հեղելի մի գրանում դանվում ե նրա իդեալիստական սիստեմը, իսկ մյուս գլուխանում՝ նրա դիակատիկան: Հեղելի մոտ զիակելտիկան ու իդեալիզմը սերտածած են միմյանց: Հեղելը իդեալիստական դիալեկտիկայի ստեղծողն է:

Ինչումն է հեղելյան փիլիսոփայության սիստեմի եյությունը, յեթե վորձենք այն բնութագրել շատ համառոտակի: «Լուդվիգ Ֆոյերախի» մեջ Ենդելը միքանի խոսքով վարպետորեն ուրվագծում է Հեղելի փիլիսոփայական սիստեմի բնութագրիը:

Փիլիսոփայական այդ սիստեմի հիմքում ընկած է վորով սկզբունքը—«բացարձակ իդեան»: Հեղելը որյեկտիվ իդեալիստ է: Յեթե Հեղելի մոտ միայն այդ լիներ, ապա հազիվ թե հարկ լիներ նրա մասին շատ խոսել: Գիտության պատմության մեջ, փիլիսոփայության պատմության մեջ իդեալիստաներ շատ ու շատ են յեղել: Հեղելը հաղարավոր ուրիշ մանր ու աննշան իդեալիստներից տարբերվում եր նրանով, վոր վոգու սկզբունքը, վոր նրա կողմէց գրված է իր ամբողջ աշխարհայցքի հիմքում, տարբերվում է առանձին հատկություններով: Հեղելի «բացարձակ իդեան» տարբերվում է նրանով, վոր նա ոժտված է դիալեկտիկական բնությամբ: Նա զարգանում է համաձայն դիալեկտիկական որենքների: «Բացարձակ իդեայի» դիալեկտիկական բարախումը, յեթե այսպես կարելի յե արտահայտվել, կաղմում է նրա հիմնական վորակը: Մի խոսքով, դիալեկտիկական, այսինքն քանակը վորակի փոխանցվելու միջոցով, հեղափոխական թոփչքի ոգնությամբ, հակասությունների պայքարի միջոցով տեղի ունեցող զարգացումը, անընդհատ ծագումն

ու վոչնչացումը, ձեւրի մշտնջենական հերթափոխումը և այլն, իրենցից ներկայացնում են, ըստ Հեղեղի, նրա «բացարձակ իդեալի» ներքին զարկերակը, ոիթմը, կյանքը:

«Բացարձակ իդեան», ինքնին անցնելով ներքին զարդացման բոլոր ստագիմները, դիալեկտիկական շարժման իր ամբողջ ցեղելը, վերամարմնավորվում ե բնության, իր, ինչպես արտահայտվում ե Հեղեղը, «այլակեցության»: Ի՞նչ բան ե բնությունը՝ Հեղեղի տեսակետից: Այդ՝ նույն «բացարձակ իդեալի» կեցության մի այլ ձևն ե, նրա բացասումը: «Բացարձակ իդեան» բացասում ե ինքն իրեն ու անցնում ե «արտաքին կողմը»—ասում եր Հեղեղը, իսկ նա, ինչպես մենք տեսնում ենք, խոսում եր բավականին մշուշապատ կերպով: «Բացարձակ իդեան» կարծես թե իր վրա յե գցում արտաքին, բնական, մատերիալ գգեստը: Բնության ներքին եյությունը, ըստ Հեղեղի, այսպիսով, հանդիսանում ե «բացարձակ իդեան»:

Բնության վերաբերյալ Հեղեղի ուսմունքը, ի միջի այլոց, տարբերվում ե ամենամեծ մետաֆիզիկականությամբ: Հեղեղի մոտ բնությունը ժամանակի մեջ չի զարդանում, այլ միայն ծավալվում, պեսզիսանում ե տարածության մեջ:

Այդ խոսում ե այն մասին, վոր Փիզիկական բնության ըմբռնման մեջ Հեղեղը գեռ շատ բանում կանոնած եր ԽVIII դարի մեխանիկական բնագիտության դիրքերի վրա: Ենդեւուը մատնանշում ե, վոր Հեղեղը բնության վերաբերյալ իր ուսմունքի մեջ նույնիսկ մի քայլ հետ արեց իր նախորդ՝ Կանտի համեմատությամբ, վորն աշխարհների ծագման իր թեորիայի մեջ յենթադրում եր, թե բնությունը զարդանում ե ժամանակի մեջ, թե արեգակնային սիստեմը ունեցել ե սկիզբ և ունենալու յե վախճան:

Բնության նկատմամբ Հեղեղը հայացքների ամբողջ մետաֆիզիկականությամբ հանդերձ (հայացքներ, վորոնքնչանկելի չափով պայմանավորված եյին Հեղելյան իդեալիդմով, առաջացել եյին իդեալիստական սիստեմի կարիքներից)՝ Հեղելյան դիալեկտիկական չեր կարող հզոր աղբյուր չծառայել դիալեկտիկական մտքերի համար նաև բնագիտության մեջ: Ինքը Հեղեղը, հակառակ բնության նկատմամբ ընդհանուր

առմամբ մետաֆիզիկական իր հայացքին, արտահայտել ե մի շարք հանձարեղ մտքեր հատկապես մատերիալ բնության զարդացման դիալեկտիկական բնությի մասին: Այս թե ինչու հեղելյան դիալեկտիկական պետք ե ազդեց բնադիմության բեղմնավոր զարդացման վրա: Այդ իմաստով հեղելյան դիալեկտիկական, թեև պարուրված եր միստիկական, իդեալիստական զգեստով, այնուամենայնիւլ շարունակում եր այն տրադիցիաները, վորոնց սկիզբը դրեց կանուր իր «Բնագիտության համընդհանուր պատմությունը և յերկնքի թեորիան» յերկի մեջ (1755):

Այժմ անցնենք մարդկային հասարակության հեղելյան ըմբռնմանը: Ի՞նչ բան ե մարդկության պատմությունը Հեղեղի տեսակետից: Բայտ Հեղեղի՝ մարդկության պատմությունը դարձյալ վոչ այլ ինչ ե, քան յեթե այդ նույն «բացարձակ իդեալի» մարմնացումն ու զարդացումը, Բայց քանի վոր մարդկային պատմությունն իդեալիստ Հեղեղի համար ամբողջապես հանդում եր մարդկային վոգու, դիտակցության, ճանաչողության պատմությունը, քանի վոր, միանգամայն բնականորեն, Հեղեղը չեր տեսնում և չեր կարող տեսնել մարդկային պատմության խկական մատերիալ հիմքը, ապա այստեղ «վոգու թագավորության» մեջ, ըստ Հեղեղի, վերըստին սկսվում ե դիալեկտիկական զարդացում ժամանակի մեջ: Մարդկային պատմությունը, վորպես «բացարձակ իդեալի» մարմնացում, ըստ Հեղեղի, զարդանում ե դիալեկտիկորեն:

Յեվ այսպիս, Հեղեղը թեղիս ե առաջադրում, վոր մարդկության պատմությունը զարդանում ե և այն ել զարդանում է դիալեկտիկական որենքների համաձայն: Պատմության նկատմամբ այդպիսի մոտեցումը շատ կարևոր քայլ եր դեպի առաջ սոցիալական դիտության զարդացման մեջ:

Սակայն, Հեղեղի մոտ պատմության հարցերում ել մեծը զուգորդվում է մանրի, աննշանի հետ: Մարդկության պատմության բոլոր շարժիչ ուժերը Հեղեղը հանդեցնում եր, վերջիկերջո, մեկ ուժի—իդեալին: Բայտ Հեղեղի՝ ինչի՞ց կործանվեց Հունաստանը: Նրանից, վոր այն դեղեցկի իդեան, վոր կազմում եր հունական կյանքի սկզբունքը, կարող

եր լինել միայն շատ կարճառել Փաղա համաշխարհային վո-  
գու զարդացման մեջ, վորից հետո պետք է առաջանար նոր  
իդեա և փոխարիներ գեղեցկի իդեային:

Բայց, ինչպես ճիշտ նշում եր զեռ Պլեխանովը, նման  
«պատասխանը» միայն ճոռոմ, տափակ կրկնությունն եր  
դրված հարցի, վորովհետեւ նա վոչ մի պատասխան չեր տա-  
լիս: Հարցի հեգելյան պատասխանն անխուսափելիորեն նոր  
հարց եր ծնում՝ իսկ ի՞նչն եր պատճառը, վոր ծագեց նոր  
իդեան ու հնացավ գեղեցկի իդեան: Այդ կապակցությամբ  
Պլեխանովը զրում ե.

«Հեգելը, — վորին պատկանում և Հունաստանի կործան-  
ման հենց նոր մեջրերիած բացատրությունը, — ասես թե  
ինքն ել և այդ զգում և շտապում ե լրացնել իր իդեալիստա-  
կան բացատրությունը՝ վկայակոչելով հին Հունաստանի  
անտեսական իրականությունը. «Լակեդեմոնը կործանվեց  
գլխավորապես գույքերի անհավասարության հետեան-  
ուվ», — ասում ե նա: Յեվ այդպես նա վարվում և վոչ մի-  
այն այստեղ, յերբ խոսքը վերաբերում և Հունաստանին:  
Դա, կարելի յե ասել, նրա անհոփոխ պրիոմն և փիլիսոփա-  
յության պատմության մեջ. սկզբում աբուլուտ իդեայի  
հատկությունների միքանի մշուշապատ վկայակոչումներ,  
իսկ հետո՝ այն ժողովրդի գույքային հարաբերությունների  
բնույթի և զարդացման ավելի ընդարձակ և, հարկադի, շատ  
ավելի համոզիչ մատնանշումներ, վորի մասին խոս-  
վում ե»<sup>1</sup>:

Պատմական յերեսություններին հեգելյան մոտեցման  
եյտությունը մի քիչ ավելի կոնկրետ պատկերացնելու համար  
բերենք հետեւյալ որինակը: Հեգելը, բնութագրելով Նապո-  
լեոնին, մի տեղ ասում է. «Նապոլեոնը — այդ համաշխարհա-  
յին վոդին և ձիու վրա»: Հեգելի այդ պնդման իմաստը  
պարզ է: Պատմական անձնավորությունները, ըստ Հեգելի,  
կատարում են միայն «համաշխարհային վոդու», կամ նույն  
«աբսոլուտ իդեայի», վոր միննույն բանն է, նախանշումնե-  
րը, նախագծումները: Հեգելն ուղղակի այդպես ել ասում է,  
ըստ

վոր մեծ անհատը վոչ այլ ինչ է, քան յեթե «համաշխար-  
հային վորու գործալարը»:

Պլեխանովն իր «Պատմության նկատմամբ մոնիստական  
հայացքի զարդացման հարցի շուրջը» աշխատության մեջ  
ձիշտ մատնանշում և Հեգելի մատուցած այն ծառայությու-  
նը, վոր նա առաջին անգամ պատմական պրոցեսը գիտեց վոր-  
պես որինաչափ մի պրոցես, վորի մեջ «ականավորանհամանե-  
րը», «Հերոսները» գործում են վոչ թե կամայականությամբ,  
այլ որյեկտիվ որենքների հիման վրա: Այդ Հեգելի հանձա-  
րեղ հայունագործումն եր, վոր ցույց է տալիս, թե ինչպես  
նրա մոտ այստեղ ել իրեն ճանապարհ է հարթում մեծը  
ծիծաղելիի միջով, իդեալիստական թաղանթի միջով «հա-  
մաշխարհային վորու» տեսքով, վորը ուանում է ձիու վրա:

Ի՞նչ բան են, ըստ Հեգելի, հասարակական դիտակցու-  
թյան տարբեր տեսակները: Գիտությունը, արվեստը, գրա-  
կանությունը, փիլիսոփայությունը և այլն, ըստ Հեգելի,  
իրենցից ներկայացնում են միայն իդեական զարդացման  
ձևերը, վորոնց ոգնությամբ «աբսոլուտ թղեան» հանդում է  
իր ինքնաճանաչմանը: Փիլիսոփայության բնադրավառում  
«աբսոլուտ իդեան» փիլիսոփայական տարբեր սիստեմների  
միջոցով ամելի ու ամելի հասնում է իր սեփական հյության  
ձանաչմանը, մինչեւ վոր, վերջապես, Հեգելի փիլիսոփայու-  
թյան մեջ «աբսոլուտ իդեան» ամբողջովին հասնում է իր  
ինքնաճանաչմանը: Դրանով իսկ ձեռք և բերված աբսոլուտ  
ձմբարտությունը, և փիլիսոփայության հետագա զարդա-  
ցումը, ըստ Հեգելի, գառնում է անհնարին և նույնիսկ վոչ  
պիտքական:

Քաղաքականության բնադրավառում Հեգելը գտնում էր,  
վոր Գերմանիայում տիրապետած քաղաքական կարգը հան-  
դիսանում է քաղաքական կառուցվածքի պատակը, պետական  
կառուցվածքի ամենից իդեալական ու կատարյալ տեսակը:  
«Աբսոլուտ իդեան» այդ կարգի մեջ գտել է իր ամենալավ  
ժամանացումը: Պարզ է, վոր այդպիսի քաների համար պրո-  
տական ուսակցիոներները Հեգելին բարձրացրին Պրուտայի  
պետական փիլիսոփայի պատվաստիհանին: Նրանք Հեգելից  
չպիտականց չորհակալ ելին այն բանի համար, վոր նաև պրո-

1 Գ. Վ. Գլեխանով, Պատմության նկատմամբ մոնիստական հայոց-  
քի զարդացման հարցի շուրջը, Պետքաղըթատ, 1938 թ., Հայքակերտու-  
թյան 135:

սական Փեողալական միապետության վոտքերի տակ դրեց իր փիլիսոփայության ամենահոյակառ շենքը։ Հենց դա եւ նշանակում եր «Հեղափոխական կողմը ճզմել անչափ ծալալ՝ ված պահպանողական կողմի ծանրության տակ» (Ենգելս)։

Այսպես ուրեմն, ինչո՞ւմն ե հեղելյան փիլիսոփայության մեթոդի ու սխտեմի միջև, նրա աշխարհայացքի հեղափոխական ու պահպանողական կողմերի միջև յեղած հակասությունը։

Նրա դիմացեկտիկան ասում ե, վոր մտածողը չի կարող և չպետք ե հանդստանա վոչ մի դրական ու վերջնական յեղակացության վրա, վոր նա պետք ե վորոնի՝ չկան արդյոք այդ առարկայի մեջ հակադիր ուժեր ու վորակներ։ Դիմացեկտիկան ասում ե, վոր ամեն ինչ զարդանում, աճում, փոփոխվում ե, մշտնջենապես ծագում ու վոչնչանում ե, և չկա մի ուժ, վորը կարողանա կանդնեցնել կամ կասեցնել այդ մշտնջենական շարժումը, չկա ուժ, վորը կարողանա ընդդիմադրել իրերի այդ դիմացեկտիկային։ Գյոթեն մշտնջենական դիմացեկտիկական շարժումն արտահայտում ե հետեւյալ նշանակոր խոսքերով։

Գործի մըրկում, կյանքի ալիքում  
Յես ծառանում եմ,  
Յես կռանում եմ...  
Մահն ու ծնումը  
Հայերժ մի ծով ե.  
Կյանքն ու շարժումը  
Լոկ հայերժով ե...  
Այսպես՝ անցողիկ կյանքի դաղդյահով  
Աստվածությանը հյուսում եմ նոր շոր։

Հեղելյան դիմացեկտիկան պահանջում եր ընդունել, վոր զարդացումն անոլերջ ե, իսկ հեղելյան սխտեմն ասում եր. հանձին պրուսական Փեողալական միապետության մենք ունենք քաղաքական զարդացման վերջնական արդյունքը, գենը շարժումն անհնարին ե. հանձին հեղելյան փիլիսոփայության ձեռք ե բերված «աբովուտ ճշմարտություն», ե փիլիսոփայության հետագա զարդացում պետք չի։ Հեղելյան դիմացեկտիկան ասում եր՝ ամեն ինչ աճում և զարդանում ե

հակասությունների պայքարի հետևանքով, ամեն մի ձեռք բերված սատիճան—ուղածդդ բնագավառում կուլ ե գնում ներքին հակասություններին և տանում ե դեպի նոր, բարձրագույն սատիճան։ Իսկ հեղելյան սխտեմն ասում եր՝ մարդկությունը, հանձին հեղելյան փիլիսոփայության, բարձրանալով մինչեւ «աբովուտ իդեալի» ճանաչումը, արդեն այլևս վոչ մի հակասություն չդիտե, և հետագա շարժումը պարտադիր չե։

Սրանք են հեղելյան փիլիսոփայության, նրա ուսմունքի հեղափոխական ու պահպանողական կողմերի միջև յեղած այն հակասությունները, վորոնք պետք ե իրենց յելք գլունելին։ Յեվ այդ յելքն իսկապես գտնվեց Հեղելի մահից հետո, յերբ Գերմանիայում հասարակական իրադրությունը չիկացավ, յերբ մոտեցավ 1848 թ. հեղափոխական փոթորիկը։

Հեղելի մահից քիչ ժամանակ անց նրա դպրոցը հիմնականում պառակտվեց յերկու խմբի—աջ և ձախ հեղելականների։ Աջ հեղելականներն ամենից ավելի հակած եյին հեղելյան փիլիսոփայության պահպանողական կողմին, վորձում եյին այդ փիլիսոփայությունից անել ամենառեակցիոն յեղակացություններ։ Ի դեպ ասած, հեղելյան իդեալիստական սխտեմը մտածողության այլօպիսի պահպանողական կարգի համար բավականաչափ մատուրիալ եր տալիս։ Զախ հեղելականները, ընդհակառակը, վորձում եյին Հեղելի փիլիսոփայությունից պրոդրեսիվ յեղակացություններ անել այն ժամանակվա իրականության վերաբերմամբ։ Հեղելյան փիլիսոփայության հեղափոխական կողմը, նրա դիմացեկտիկան, այդ կողմից ել շատ մեկնակետեր եր տալիս։

Մարքսն ու Ենդելսը, գիտական կոմունիզմի հիմնադիրները, իրենց հեղափոխական գործունեյության սկզբին հարում եյին ձախ հեղելականներին։ Սկզբում նրանք կանզնած եյին հեղելյան իդեալիստական դիրքերի վրա։ Բայց հարկավոր ե հենց այստեղ ել նշել, վոր ձախ հեղելականների մեջ Մարքսն ու Ենդելսը ծայրահեղ թեումն եյին, ամենից հեղափոխականներն տրամադրված այն մարդիկն եյին, վոր ձկտում եյին հեղելյան փիլիսոփայությունից անել ամենից ծայրահեղ յեղակացություններ։ Այդ յերիտասարդ արծիվ-

ների յեռուն հասարակական ու դրական գործունեյության մեջ արդեն շատ վաղ մեծ ուժով արտահայտվեց նրանց հեղափոխական հանճարը։ Հարելով ձախ հեղեղականներին, գեղանդնած լինելով հեղեղայն իդեալիստական դիրքերի վրա, չափազանց բարձր գնահատելով Հեղեղի փիլիսոփայությունը, նրանք զբա հետ մեկտեղ արդեն տեսնում են այդ փիլիսոփայության հիմնական արատը, ներքին հակասությունը և ձգտում են նրանից յեղ դժունել։

Մարքսն ու Ենդելսը շատ շուտով ազատվեցին հեղեղայն իդեալիզմից, արմատապես վերամշակեցին հեղեղան դիալեկտիկական մեթոդը, վորովհետեւ այն ձեռվ, ինչպես դիալեկտիկական մեթոդը թողեց Հեղեղը, այն ե՛ արտարակա, իդեալիստական ձեռվ, նա անդետք եր գործածության համար։ Անհրաժեշտ եր իդեալիստական կեղեց ազատել Հեղեղի հիմնական իդեան—զարգացման նրա իդեան և այդ իդեան կերպուել մատերիալ իրականության նկատմամբ։ Հարկավոր եր վերջ տալ «վորու» հեղեղան իդեալիստական դիալեկտիկային և ստեղծել կյանքի, մատերիայի, կեցության դիալեկտիկական զարգացման սիստեմատիկ թեորիան։ Ավելի ուշ Մարքսը գրել ե.

«Դիալեկտիկան Հեղեղի մոտ գլուխվայր ե կանոնած։ Պետք ե այն գլուխվիր շուռ տալ՝ միստիկական կեղեւ տակից ուսցիոնալ հատիկը բացահայտելու համար»<sup>1</sup>։

Հարկավոր եր Հեղեղի իդեալիստական դիալեկտիկայից վերցնել նրա «ուսցիոնալ հատիկը», նրա բանական իմաստը, մի խոսքով, մատերիալիստորեն վերամշակել հեղեղան դիալեկտիկան։ Այդ թեորիական շատ լուրջ խնդիր եր։ Նշանակելիորեն ավելի ուշ Կուգելմանին դրած իր նամակների մեջ Մարքսը գրել ե.

«Նա (Դյուրինդը—Մ. Մ.) շատ լավ գիտե, վոր հետադրուման իմ մեթոդն այն չէ, ինչ վոր Հեղեղի մոտ ե, վորովհետեւ յես մատերիալիստ եմ, իսկ Հեղեղ—իդեալիստ։ Հեղեղան դիալեկտիկան յու-

1 Կ. Մարքս, Կապիտալ, I հատ., եջ XL, 1929 թ.: Հայկուսէրտու, եջ XXXI, 1933 թ.։

ըաքանչյուր դիմալեկտիկային հիմնական ձեռն և հանդիպանում, բայց միայն նրա միստիկական ձեռից այդ դիալեկտիկան մաքրելուց հետո, իսկ հենց այդ ել իմ մեթոդը տարբերում ե նրանից»<sup>1</sup>։

Այդ հարցի առթիվ Լենինը գրել ե.

«Հեղեղի լոգիկան չի կարելի կիրառել նրա ավյալ ձեռվ, չի կարելի վերցնել վորպես տվյալ։ Նրանից հարկավոր և ընտրել տրամաբանական (դնունուլոգիկական) յիրանդավորումները, մաքրելով իդեալիստիկայից՝ այդ գեռ մեծ աշխատանք ե»<sup>2</sup>։

Ահա թե ինչու «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ ամբողջ հստակությամբ ասված ե, վոր

«Մարքսն ու Ենդելսը Հեղեղի դիալեկտիկայից վերցրել են նրա միայն «ուսցիոնալ հատիկը», դեռ զցելով հեղեղան իդեալիստական կեղեց և չարունակելով զարգացնել այդ դիալեկտիկան՝ նրան արդիական զիտական տեսք տալու համար»<sup>3</sup>։

Համկանալու համար, թե ինչպես Մարքսն ու Ենդելսը վճռեցին թեորիական այդ խնդիրը, թե ինչպես նրանք ազատվեցին հեղեղան իդեալիզմից, թե դրա հետ միասին, ինչպես նրանք պահպանեցին այն արժեքավորը, ինչ կար Հեղեղի մոտ, հարկավոր ե հասկանալ այն նշանակությունը, վոր ուներ Մարքսի ու Ենդելսի իդեալիստ զարգացման վրա նրանց մերժավոր նախորդ, մատերիալիստ Փոյերբախը։

«Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ այդ հարցի առթիվ ասված ե.

«Իրենց մատերիալիզմը բնորոշելով, Մարքսն ու Ենդելսը սովորաբար վկայակոչում են Ֆոյերբախին, վորպես մի փիլիսոփայի, վորը վերականդնել և մատերիալիզմն իր իրավունքների մեջ։ Սակայն այդ չի նշանակում, թե Մարքսի և Ենդելսի մատերիալիզմը նույնական ե Ֆոյերբախի մատերիալիզմին։ Իրոք Մարքսն ու Ենդելսը Ֆոյերբախի մատերիալիզմից

1 Կ. Մարքս և Փ. Էնգելս, Պիսьմա, стр. 230, Соցէկիզ, 1931.

2 «Ленинский сборник» XII, стр. 205.

3 «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթաց», եջ 100, Համկըրբախ, եջ 140։

վերցրին նրա «Հիմնական հատիկը», չարունակելով դարձացնել և դարձնելով այն մատերիալիզմի դիտական-փիլիսոփայական թեորիա և դեն գցելով նրա իդեալիստական ու կրոնական-եթիկական արտաքին շերտերը»<sup>1</sup>:

Ֆոյերբախը (1804—1872) հասարակական ու փիլիսոփայական գործունեյության ասպարեզ յելավ մի ժամանակաշրջանում, վորը նշանակելիորեն արդեն տարբերվում եր այն ժամանակաշրջանից, յերբ հանդես եր յեկել Հեղելը: Մի կողմէց, ամբողջ Յելբոպայի վրա, մասնավորապես Գերմանիայի վրա, խոշոր ազգեցություն ունեցավ 1830 թ. հուլիսյան հեղափոխությունը Ֆրանսիայում: Մյուս կողմէց, Գերմանիայում բուրժուազիայի ու դեմոկրատական ինտելիգենցիայի մեջ ուժեղ կերպով աճեցին հակալառավարական տրամադրություններ, առանձնապես այն ժամանակից, յերբ զահ բարձրացավ կեղծավոր ու խաթերա Ֆրիդրիխ-Վիլհելմ IV-ը: Գերմանական ինտելիգենցիան դադարեց իր շահերի արարակատ-փիլիսոփայական շարադրման այն ձեռքից գոհ լինելուց, վորը բնորոշ եր Կանտի ու Հեղելի փիլիսոփայության համար: Մոտեցած 1848 թ. հեղափոխական փոթորիկն իր կնիքն եր դնում այն ժամանակվա Գերմանիայի փիլիսոփայական ու թեորիական գործունեյության վրա: Ֆոյերբախի փիլիսոփայության մեջ իրենց արտացոլումը ստացան Գերմանիայի հեղափոխական դեմոկրատիայի առաջավոր իդեաները, հեղափոխական ինտելիգենցիայի ուղիղակալ ձգուումները և իդեալները:

Ֆոյերբախն իր փիլիսոփայական գործունեյության սկզբին իդեալիստ-հեղելական եր: Նա սպատկանում եր ձախ հեղելականներին: Սակայն նա շատ շուտով աղատվեց Հեղելի իդեալիզմից, դեն գցեց հեղելյան «արսուուտ իդեան» և հոչակեց մատերիալիզմի հաղթանակը: Ֆոյերբախը հայտարարեց, վոր հեղելյան իդեալիզը միայն փիլիսոփայուրեն ներկած թեոլոգիա յե: Հեղելյան ուսմունքն այն ժաման, թե բնությունը վողու այլակեցությունն ե, մատնանշում եր Ֆոյերբախը, թրենից ներկայացնում ե վոչ այլ

1 «Համկ(ր)կ պատմության համառոտ դասընթաց», եջ 100, Հայքագիրառ, եջ 141:

ինչ, քան յեթե աերտերականության այն տեսակետի փիլիսոփայական արտահայտությունը, թե իրը աստված ե սաեղեկը աշխարհը: Հեղելի «արսուուտ վողին», ասում եր Ֆոյերբախը, վոչ այլ ինչ ե, քան յեթե մարդկային սովորական դիտակցություն, միայն թե ոտարացած, մարդուց կտրված և որյեկտիվ «արսուուտ իդեայի» գահը բարձրացված: Ի հակալչիո դրան Ֆոյերբախն առաջադրեց՝ աթեիստական այն դրույթը, թե մարդն ե աստծուն ստեղծում ըստ իր պատկերի և նմանության: Բայց Ֆոյերբախի՝ հետեղողական աշխարհայացքի համար վորակես մեկնակետ պետք է դրվի նյութական աշխարհը—բնությունը, մարդը:

Ֆոյերբախի պատմական յերախտիքն այն ե, վոր նա վճռողական հարվեց հեղելյան իդեալիզմին: Ֆոյերբախի իդեաների աղեցությունը Գերմանիայի նախահեղափոխական իրադրության մեջ շատ ուժեղ եր: 1848 թ. հեղափոխական իդեական նախապատրաստման գործում Ֆոյերբախը պահանջ դեր չխաղաց, քան խաղացի և 1848 դարի Փրանսական մատերիալիստների ու աթեիստների վայլուն պլեադան՝ 1789 թ. Փրանսական բուրժուական հեղափոխության նախորյակին: Ենդեւը հետեւյալ խորաթափանց խոսքերով ե բնութագրում Ֆոյերբախի 1841 թ. լույս տեսած «Քրիստոնեյության եյությունը» յերկը.

«Նա մի հարվածով, —դրում ե Ենդեւը, —ցըեց այդ հակասությունը, նորից և առանց վորեն վերապահումների հռչակելով մատերիալիզմի հաղթանակը: Բնությունը գոյություն ունի անկախ վորեն փիլիսոփայությունից: Նա այն հիմքն ե, վորի վրա աճել ենք մենք, մարդիկո, վոր նույնակես բնության արդյունք ենք: Բնությունից ու մարդուց դուրս վոչինչ չկա, և բարձրագույն այն ե յակները, վոր ստեղծված են մեր կրօնական ֆանտազիայով, այդ միայն մեր սեփական եյության ֆանտաստիկ պնդրագարձումներն են: Կախարդանքը հանդիեց: «Ախտեմը» փշրված եր ու մեկդի նետված, հակասությունը լուծված ե այն հանդամանքի պարզ դրսեորումով, վոր նա գոյություն ունի միայն յերևակայության մեջ: Հարկավոր եր վերապրել այդ դրսերի՝ աղատարար ներ-

գործությունը, դրա մասին պատկերացում ունենալու համար: Մենք բոլորս զմայլանքի մեջ ենքնք, և մենք բոլորս մեկն դարձանք Փոյերբախականներ»<sup>1</sup>:

Ֆոյերբախի «Քրիստոնեյության եյությունը» իսկապես հիանալի աշխատություն է: Այդ գիրքը, Մարքսի ու Ենդելի արտահայտությամբ, «Հրաժարական» տվեց «Հեղեղի հոմաշխարհային վողուն»: Նա լուրջ հարված հասցրեց իդեալիզմին ու կրոնին: Մարքսն ու Ենդելսը «Սուրբ ընտանիքի» մեջ հետեւյալ կերպ են գնահատում Ֆոյերբախի պատմական ծառայությունները.

«Ո՞վ վոչչայցրեց, —գրել են նրանք, —հասկացողությունների դիալեկտիկան—աստվածների պատերազմը, վորը ծանոթ ե միայն փիլիսոփաներին: Ֆոյերբախը: Ո՞վ դրեց չին հնոտիի, «անսահման ինքնաղիտակցության» տեղը վոչ թե «մարդու նշանակությունը» (կարծես թե մարդն ունի ելի ինչ-վոր այլ նշանակություն, քան թե այն, վոր նա մա՞րդ է), այլ թրեն «մարդուն»: Ֆոյերբախը և միայն Ֆոյերբախը»<sup>2</sup>:

Մարքսն ու Ենդելսը գրել են, վոր հարկավոր եր անցնել հրեղեն հեղեղատի միջով (Feuer-Bach), հրեղեն քավարանի միջով, ինչպիսիք են Ֆոյերբախի հայացքները, իդեալիզմից ազատվելու և հաստատապես մատերիալիզմի դիրքերի վրա կանգնելու համար:

Դրա հետ մեկտեղ Մարքսն ու Ենդելսը հենց սկզբից զգացին Ֆոյերբախի մատերիալիզմի սահմանափակմածությունը, նրա թերությունները: Ֆոյերբախը մի կողմ նետեց հեղելյան միստիցիզմը և հեղելյան իդեալիզմը, բայց նա ջրի հետ միասին վաննայից դուրս չպատեց նաև յերեխային: Ֆոյերբախը յերեք չի հասկացել հեղելյան դիալեկտիկայի նշանակությունը, առավել ևս նրա մոտ խոսք ել չի կարող լինել այդ դիալեկտիկան իրականության նկատմամբ կիրառելու մտին: Ֆոյերբախը հրաժեշտ տվեց Հեղեղի իդեա-

1 Ֆ. Ենգելս, Լուգարդ Ֆոյերբախ, Պետքաղհրատ, եջ 12—14, Հայկական, եջ 15—16:

2 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. III, стр. 117.

լիզմին, բայց այն արժեքավորն ու առողջը, վոր Հեղեղի մոտ սկարուրված եր իդեալիստական հաղուստի մեջ, Ֆոյերբախը չկարողացավ քննադատորին վերամշակել ու ողտագործել: Խնդիրը լուծեցին դիալեկտիկական մատերիալիզմի հիմնադիրները—Մարքսն ու Ենդելսը: Ֆոյերբախին աբստրական, հայեցողական մատերիալիստ եր: Ընդհանուր փիլիսոփայական աշխարհայցքի հարցերում լինելով մատերիալիստ, Ֆոյերբախը չկարողացավ իր մատերիալիզմը կիրառել, յերբ մոտենում եր պատմության հարցերին: Այսական նա գառնում եր բոլորովին անողնական: Պատմությունը և մատերիալիզմը Ֆոյերբախի մոտ ընթացան տարբեր կողմեր: «Ֆերմանական իդեոլոգիայի» մեջ (1846 թ.) Մարքսն ու Ենդելսը, վերջնականապես հաղթահարելով Ֆոյերբախի մատերիալիզմի սահմանափակվածությունը, գրել են.

«Վորչափով Ֆոյերբախը մատերիալիստ է, նա չի պաղվում պատմությամբ, թոկ վորչափով վոր նա դիտում ե պատմությունը—նա ամենեկին մատերիալիստ չե: Մատերիալիզմը և պատմությունը նրա մոտ մեկը մյուսի հետ կապված չե, վորը, ասենք, պարզ և արդեն ասվածից»<sup>1</sup>:

Այդ տեղի ունեցավ այն պատճառով, վոր Ֆոյերբախը չհասկացավ զարդացման իդեան, վորը ծավալեց Հեղեղը միստիկիկացիայի յենթարկված ձեռվ: Չըմբռնելով զարդացման իդեան, այսինքն՝ դիալեկտիկան, Ֆոյերբախը հաստարական կյանքի յերեւոյթները բացատրելիս՝ սայթաբում եր հետ՝ դիալեկտիկայի գիրքերը:

Ֆոյերբախի մատերիալիզմի սահմանափակվածությունը փոքր ինչ այլելի կոնկրետ պատկերացնելու համար բերենք նրա աֆորիզմներից մեկը: Ֆոյերբախին ասում ե: «Մարդն այն է, ինչ նա ուստում է»: Այդ, իհարկե, մատերիալիստական դրույթ ե, բայց զա վուլգար մատերիալիզմ է: Ով դրա վրա մերժակետ կդնի և առաջ չի գնա, նա այնքան իրեն կսահմանափակի, վոր վոչինչ չի կարողանա ըմբռնել հաստարական կյանքի որինաչափություններից: Ֆոյերբա-

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 35.

խը մարդուն մոտենում և միայն ֆիզիոլոգիակես կամ բիոլո-  
գիակես։ Նա չի տեսնում այն, վոր մարդը պատմության  
մեջ զարդացող հասարակական եյալ ե, նա չի տեսնում,  
վոր մարդն ակտիվ, արտադրող եյալ ե։ Յեթե փորձենք  
նույնպիսի հակիրճ ձեւակերպումով արտահայտել Մարքսի  
ու Ենդելսի տեսակետը, ապա կարելի կլինել ասել՝  
մարդն այն ե, ինչ նա արտադրում ե, աշխատանքի ինչ-  
պիսի գործիքներով վոր նա արտադրում ե։ Այդպիսի հար-  
ցադրումը, ինչպես յերկինքը յերկրից, տարրերվում ե Ֆու-  
յերբախի վերեւում բերված ափորիզմից։ Ֆոյերբախը չգի-  
տե խական, ունալ, պատմության մեջ պատմական վորու  
ժամանակաշրջաններում ապրող մարդուն։ Ահա թե ինչու,  
ասում են Մարքսն ու Ենդելսը, Ֆոյերբախը

«ստիպված ե, տեսնելով, որինակ, առողջ մարդ-  
կանց փոխարեն գեղձախտավորների, աշխատանքից  
հյուծված ու թոքախտավոր չքալորների ամբոխին,  
գիմել «բարձրագույն հայեցողությանը» և թղեալական  
«հալասարմանը ցեղի մեջ», այսինքն՝ վերստին ընկնել  
իդեալիզմի մեջ հենց այստեղ, վորտեղ կոմունիստա-  
կան մատերիալիստը ինչպես արդյունաբերության,  
այնպես ել հասարակական կարգի փոխակերպման  
անհրաժեշտությունն ու դրա հետ միասին պայմանն  
ե նշմարում»<sup>1</sup>։

Մարքսի ու Ենդելսի այդ հիմքանչ խոսքերի մեջ իր  
ամբողջ ակնհայտությամբ բացահայտվում ե Փոյերբախյան  
մատերիալիզմի պակասությունը։ Պարզ ե, վոր այդ կարգի  
աշխարհայացքը, այդպիսի տեսակետը չեր կարող լինել այն  
գործոն զենքը, վորի ոզնությամբ կարելի լիներ պայքարի  
մեջ մտնել իրականությունը փոփոխելու համար։ Այդ շատ  
լավ հասկացավ Մարքսը դեռ 1843 թ.։ Նա դրել ե.

«Ֆոյերբախի ափորիզմները տառապում են, իմ  
կարծիքով, այն տեսակետից, վոր նա խիստ շատ և  
շեշտ դնում բնության վրա և շատ քիչ՝ քաղաքա-  
կանության վրա։ Մինչդեռ, այդ միակ միությունն

ե, վորի չնորհիվ այժմյան փիլիսոփայությունը կա-  
րող ե գառնալ ճշմարտություն։

Յերիտասարդ Մարքսի այդ հիմնալիք խոսքերից մենք  
ակնում ենք, թե ինչպիսի բարձրության եր հասել նա ար-  
դեն այդ ժամանակ, թեև նա դեռ ձեւավորված դիակեկտի-  
կական մատերիալիստ չեր և նոր եր միայն մոտենում դի-  
տական կոմունիզմի հայացքների ձեւակերպմանը։

Ֆոյերբախի՝ հասարակական կյանքի յերեւությունը  
նրա մոտեցման թերությունների կալակցության մեջ են  
գտնվում կրոնական-եթիկական այն չերտավորումները,  
վորոնցով թափանցված և նրա փիլիսոփայությունը։ Ֆոյեր-  
բախը վերջ տվեց աստծուն՝ վորպես աշխարհի վրա, մար-  
դու վրա կանգնած բարձրագույն մի ուժի, բայց ֆոյեր-  
բախը սկսեց աստվածացնել բուն իսկ մարդուն։ Նա նույ-  
նիսկ սկսեց պաշտպանել «կրոն» խոսքը այն հիման վրա, թե  
այն «կապ» ե նշանակում։ Այդ կեղվարանական Փոկուսնե-  
րը, Ենդելսի արտահայտությամբ, իդեալիստական փիլիսո-  
փայության վերջին սողանցքն եյին։ Կրոնի աստիճաննին բարձ-  
րացվեց յերկու մարդկանց փոխարաբերությունը—սեռա-  
կան սերը, սեռական հարաբերությունները։ Պաշտպանելով  
«կրոն» բառը, աստվածացնելով «մարդկանց միջն յեղած-  
սրտազին հարաբերությունները», Ֆոյերբախն արդեն ուղ-  
ղակիորեն ուսակցիոն իդեաներ եր քարոզում, վորովհետե  
նրանցից բղխում եր ընդհանուր հաշտությունը, վորը,  
իհարկե, միայն մթազնում եր պրոլետարիատի գասակար-  
գային ինքնաշխակցության արթնացումը։

Մարքսն ու Ենդելսը, գնահատելով այդ ժամանակա-  
շրջանում Գերմանիայում տեղի ունեցած իդեալական պայքա-  
րի մեջ Ֆոյերբախի դրական ամբողջ նշանակությունը, դրա  
հետ միասին վոչնչացնող քննադատության յենթարկեցին  
Փոյերբախյան մատերիալիզմի թերությունները։ «Համկ(ր)կ  
պատմության համառոտ գասլնթացի» մեջ մատնանշվում ե,  
վոր Մարքսն ու Ենդելսը Ֆոյերբախի մատերիալիզմից վեր-  
ցրին նրա «հիմնական հատիկը» և այն գարգարին այնու-  
հետեւ վորպես ժամանակակից, ներդաշնակ դիաս-փիլիսո-

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 35.

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. I, стр. 510.

փայտական թեորիա, վորպես դիալեկտիկական մատերիալիզմի ավարտուն, մինչև գերջը հետևողական աշխարհայոցք՝ Մարքսն ու Ենդելսը մի շարք տարիների ընթացքում—մոտավորապես 1839 թվից մինչև 1847 թիվը, իդեալիան կըրքու, լարված պայքար մղելով, քննադատության յենթարկեցին սոցիալիզմի հակառակութական, ուստովիական զանազան տեսակները, ուսումնասիրեցին և ընդհանրացրին բանվոր դասակարգի պատմական պայքարի վորձը և հանդեցին դիտական կոմունիզմին։ Նրանք Հեղելի դիալեկտիկան իդեալիստական դիմից դրին մատերիալիստական վուգերի վրա, նրանք զարգացման թեորիան կիրառեցին մատերիալ աշխարհի, պատմության նկատմամբ։ Նրանք սրբություն, թե ինչն է հանդիսանում պատմական զարգացման, մարդկանց հասարակական կյանքի հիմքը։ Աշխատանքի զարգացման մեջ, արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների զարգացման մեջ նրանք տեսան հասարակության այդ մատերիալ հիմքը։

1847 թ. Մարքսն ու Ենդելսը ստեղծում են մարքսիզմի ամենահոյակապ աշխատությունը՝ «Կոմունիստական կուսակցության Մանիֆեստ»՝ մի գիրք, վոր դարելը և առերելու։ Վերջերս ընկեր Ստալինը մարդկային մտքի այդ մեծագույն աշխատությունը սիրով ու պատկերավոր ձևով անվանեց «մարքսիզմի յերդ յերդոցը»։ Մարքսն ու Ենդելսը «Կոմունիստական կուսակցության Մանիֆեստ» մեջ պատմության վերաբերմամբ դիալեկտիկական մատերիալիզմ կիրառելով, իր ուժով ու խորությամբ բացառիկ պատկեր ուրվագծեցին, թե ինչպես է զարգացել մարդկության պատմությունը։ Պատմությունը, ասում են նրանք, զասակարգերի պայքարի պատմությունն է։ Նրանք մեծ ուժով ցույց են տալիս բուրժուական դասակարգի պատմական՝ դերը Փեոդալիզմի դեմ մղված պայքարի մեջ և արտադրողական նոր ուժերի զարգացման մեջ։

Կարելի յե ասել, թեև այդ կհնչի վորպես պարագոք, վոր բուրժուազիայի իդեոլոգներից վոչ մեկը, բուրժուական դասակարգի դիտնականներից վոչ մեկը չի նկարագրել Փեոդալիզմի համեմատությամբ կապիտալիզմի ունեցած ոլորդեսիլ նշանակության այնպիսի պատկեր, վորպիսին

ավել են պրոլետարիատի իդեոլոգներ՝ Մարքսն ու Ենդելսը «Կոմունիստական կուսակցության Մանիֆեստի» մեջ։ Մարքսն ու Ենդելսը ցույց են տալիս, թե ինչպես բուրժուազիան քանդում եր մաքսային սահմանները, վերացնում Փեոդալական կապանքները, վորոնք խանգարում եյին արտադրողական ուժերի զարգացմանը, ստեղծում եր համաշխարհային շուկա, առաջ եր մղում արտադրողական ուժերի զարգացումը։

Դրա հետ միասին Մարքսն ու Ենդելսը տալիս են բուրժուական կարգերին հասունի հակասությունների իր ուժով զմայլելի պատկերը։ Բուրժուազիան, գրում եյին նըանք, նման է այն «կախարդին», վորն ի վիճակի չե իր խովշանքներով առաջ բերված ստորերկրյա ուժերի հախից դալ։ Մարքսն ու Ենդելսը տալիս են ցնցող պատկերը այն հակասությունների, վորոնց մեջ զարգանում ե բուրժուական հասարակությունը, հակասություններ, վորոնք հասունի են կապիտալիզմի մնությանը։ Բուրժուազիայի կողքին աճում ու զարգանում ե նրա գերեզմանափորը — բանվոր դասակարգը։ Մարքսն ու Ենդելսը ցույց են տալիս, թե ինչպես ե աճում այդ զորեղ ուժը, թե ինչպես առանձին, մասնավոր, չգիտակցված ու տարերային յելույթներից բանվոր դասակարգն անցնում ե մարտական ու գիտակցված հեղափոխական գործողությունների, թե ինչպես նա «ինքն իր մեջ» զասակարգից վեր ե ածվում «ինքն իր համար» դասակարգի, մինչև վոր հասնում ե ժամանակը, յերբ նա ամենայն որությամբ դնում ե կապիտալիստական կարգի տապարման հարցը։

Միայն նա, ով զինված ե յեղել դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդով՝ այդ ամենից առաջավոր ու ամենից հետեւղական աշխարհայցքով, վորը հենվում է գիտության ու փիլիսոփայության բոլոր նվաճումների վրա՝ միայն նա կարող եր այդպիսի խորությամբ հիմնավորել բանվոր դասակարգի պատմական դերը և տալ համաշխարհային պատմության ընդհանուր հակասական ընթացքի հրաշալի պատկերը։ «Կոմունիստական կուսակցության Մանիֆեստը», իսկ այնուհետև՝ Մարքսի մոնումենտալ յերկը՝ «Կապիտալը» հանդիսանում են մարքսիզմի ամենամեծ գանձարան-

ները։ Այդ հանճարեղ յերկերում տրված ե այն ամենակարևորը, վոր ստեղծել ե մարքսիզմը մինչեւ լենինի ու Ստալինի եպոխան։

## II

Վերևում ասածից պարզ ե, թե ինչպիսի հակայտկան նշանակություն ունի դիալեկտիկական մեթոդի դրույթների կիրառումը հասարակական կյանքի, հասարակության ոլատմության ուսումնասիրման նկատմամբ, ինչպիսի նշանակություն ունի դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդը պրոլետարիատի կուսակցության պրակտիկ գործունեյության համար։ «Համկ(թ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ բացառիկ հստակությամբ անց ե կացված այլ միտիք—դիալեկտիկական մատերիալիզմի կազմը կոմունիստական կուսակցության պրակտիկ պայքարի խնդիրների հետ։ Այդ դրքի մեջ մեծադույն հետևողականությամբ դիալեկտիկական մատերիալիզմի ընդհանուր դրույթներից թերը ձգվուծ է դեպի դասակարգային պայքարի պրակտիկ հարցերը։ «Համկ(թ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ առանձին ուժով զարգացված ե ներքին այն կազմը, վոր գոյություն ունի մարքսիզմի փիլիսոփայության և պրակտիկ հեղափոխական գործունեյության միջև, պարզված ե, վոր դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի ձիչտ ըմբռնումն ու կիրառումը հանդիսանում է դասակարգային պայքարի պրակտիկ քաղաքական հարցերի անսխալ վճռման պայմանը։ Դիալեկտիկական մատերիալիզմն այլ գրքում տրված ե վոչ թե ինչ—վոր ամբարտուն ու անշարժ ֆորմուլաների ձևով, այլ կենդանի հեղափոխական ուսմունքի ձևով, գործողության համար մարտական դեկալարության ձևով։

«Յեթե աշխարհ,—ասված ե «Համկ(թ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ,—գտնվում ե անընդհատ շարժման ու զարգացման մեջ, յեթե հնի մահացումը և նորի աճումը զարգացման որենքն ե, ապա պարզ ե, վոր այլևս չկան «անխախտ» հասարակական կարգեր, մասնաւոր սեփականության և շահագործման «հավերժական սկզբունքներ», դյալացի-

ներին կազմածատերերին յենթաբեկելու, բանվորներին կապիտալիստներին յենթարկելու «հավերժական իղեաներ»։

Նշանակում ե, կապիտալիստական կարգերը կարելի յե վոխարինել սոցիալիստական կարգերով, այնպես, ինչպիս վոր կապիտալիստական կարգերն իրժամանակ վոխարինեցին ֆեոդալական կարգերին։

Նշանակում ե, հարկավոր ե կողմնորոշվել վոչ թե դեպի հասարակության այն խավերը, վորոնք այլևս չեն զարգանում, թեպետև ներկա մոմենտին գերակշող ուժ են հանդիսանում, այլ դեպի այն խավերը, վորոնք զարգանում են, ապագա ունեն, թեպետև ներկա մոմենտին դերակշող ուժ չեն հանդիսանում»<sup>1</sup>։

Այս դրույթներից յերեսում ե, վոր հեղափոխական կռւսակցությունը, հենված լինելով մարքսիստական դիալեկտիկական մեթոդի վրա, կարող է ճիշտ կանխանշել հիմքերն իր գործունեյության, վոր ուղղված է կապիտալիզմը տապալելուն ու կոմունիստական հասարակությունը կառուցելուն։ Այդ դրույթները հիանքանչ պարզությամբ ցույց են տալիս, թե ինչու դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմը կոմունիզմի թեորիական Փունդամենտն են հանդիսանում։

«Համկ(թ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ հստակ ձևակերպված են բոլշևիկյան կուսակցության հեղափոխական գործունեյության թեորիական մեկնակետերը։ Այնտեղ առված ե.

«Յեթե զարգացման որենք ե հանդիսանում գրադադարնակական փոփոխությունների փոխարկվելն արագ և անսկնկալ վորակական փոփոխությունների, ապա սրազ ե, վոր ճնշված դասակարգերի կատարած հեղափոխական հեղաշրջումները միանդամայն բնական և անխուսակիելի յերեսությ են։

Նշանակում ե, կապիտալիզմից սոցիալիզմին անց-

1 «Համկ(թ)կ պատմության համառոտ դասընթաց», եջ 105, Հայքողհատ, եջ 147։

նելը և բանվոր դատակարդը կապիտալիստական ճշն-  
շումից աղատելը կարող ե իրականացվել վոչ թե  
դանդաղ փոփոխությունների միջոցով, վոչ թե ռե-  
ֆորմների միջոցով, այլ կապիտալիստական կարգերի  
վերակական փոփոխման միջոցով՝ միայն, հեղափո-  
խության միջոցով:

Նշանակում ե, քաղաքականության մեջ չսխալվե-  
լու համար հարկավոր ե լինել հեղափոխական, և վոչ  
թե ռեֆորմիստ:

Այսուհետեւ: Յեթե զարգացումը տեղի յե ունե-  
նում ներքին հակասությունների բացահայտման կար-  
գով, այդ հակասությունների բաղայի վրա հակագեր  
ուժերի ընդհարման կարգով՝ նպատակ ունենալով  
այդ հակասությունների հաղթահարումը, այսա պարզ  
ե, վոր պրոլետարիատի դասակարգային պայքարը  
միանդամայն բնական և անխուսափելի յերեւույթ ե:

Նշանակում ե, կապիտալիստական կարգերի հա-  
կասությունները պետք ե վոչ թե կոծկել, այլ բա-  
ցահայտել ու կծիկը բաց անել, դասակարգային պայ-  
քարը վոչ թե մարել, այլ այն մինչեւ վերջ հասցնել:

Նշանակում ե, քաղաքականության մեջ չսխալվե-  
լու համար հարկավոր ե կիրառել անհաշտ դասակար-  
գային պրոլետարական քաղաքականություն, և վոչ  
թե պրոլետարիատի ու բուրժուազիայի շահերի ներ-  
դաշնակության ռեֆորմիստական քաղաքականու-  
թյուն, և վոչ թե սոցիալիզմի մեջ կապիտալիզմի  
«ներածելու» համաձայնողական քաղաքականու-  
թյուն»<sup>1</sup>:

Այսուղից պարզ ե, թե ինչու կենին ու Ստալինը բակ-  
մից ասել են, վոր դիալեկտիկան իրենից ներկայացնում ե  
մարքիստական ուսմունքի հեղափոխական հոգին: Բնական  
է նույնպես, վոր նա, ով յելնում եր հեղափոխական մարք-  
սիզմի արմատական հիմունքների դեմ, դիալեկտիկական

մատերիալիզմի դեմ, նոր միշտ ել դավաճանել և մարքսիզ-  
մին ամբողջությամբ վերցրած:

Պայքարը՝ ամբողջությամբ վերցրած մարքսիստական-  
լինինյան թեորիայի հստակության համար, մարքսիստա-  
կան-լենինյան փիլիսոփայության հստակության համար՝  
կարմիր թելի նման անցնում և բոլշևիկյան կուսակցության  
ում բողջ պատմության միջով:

Բոլշևիկյան կուսակցությունը, վորպես նոր տիպի կու-  
սակցություն, բազմաթիվ գծերով տարբերում ե Արևմտյան  
Յեկարպայի հին, ոպրոտոնիստական, սոցիալ-դեմոկրատա-  
կան կուսակցություններից: Բոլշևիկյան կուսակցության,  
վորպես նոր տիպի կուսակցության, արմատական, սկզբ-  
բունքային տարբերություններից մեկն այն ե, վոր նրա  
պատմական ուղղու ամբողջ ընթացքում կուսակցության  
տուաջնորդներ կենին ու Ստալինը պաշտպանում ու զարգա-  
նում են դիալեկտիկական մատերիալիզմը, վորպես կուսակ-  
ցական փիլիսոփայություն: Երանք հարստացնում ու զար-  
գացնում են այդ աշխարհայացքը հասարակական ու բնա-  
գիտական գիտությունների զարգացմամբ կուտակված նոր  
տվյալների հիման վրա, իմպերիալիզմի ու պրոլետարական  
հեղափոխությունների եալիսայի դասակարգային պայքարի  
նոր տվյալների հիման վրա:

Իսկ Ա ինտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատական կու-  
սակցությունները և առաջին հերթին Ա ինտերնացիոնալի  
դիալեկտարող կուսակցությունը—գերմանական սոցիալ-դեմո-  
կրատիան,—վորոնք խորը կերպով ընկղմալել են քաղաքական  
ուղորտունիզմի մեջ և վորոնց մաշում են ուսիղիոնիզմն ու  
ունիղիոնիզմի հանդեպ հաշտվողականությունը, ամբողջա-  
պես դավաճանել են դիալեկտիկական մատերիալիզմին:

Արգեն ունիղիոնիստների ու ռեֆորմիստների առաջին  
բացահայտ արտելքները հեղափոխական մարքսիզմի դեմ  
ուղեկցվում եյին պատերազմ հայտարարելով դիալեկտիկա-  
կան մատերիալիզմին: 1898 թ. Բերնշտայնը, ունիղիոնիզմի  
հայրը, լույս ընծայեց իր տիբրահոչաւկ «Սոցիալիզմի պրոբ-  
լեմները» գիրքը, վորի մեջ ունիղիոնիզմի յենթարկեց Մարքսի  
ուսմունքը դասակարգային պայքարի բնույթի մասին, կրի-  
զիսների մասին, բանվոր դասակարգի աղքատացման մա-

<sup>1</sup> «Համականության համաստ գասընթաց», եջ 105—106,  
Հայքաղերտառ, եջ 148:

սին, գեմ յելալ հեղափոխության վերաբերյալ մարքսիստական ուսումնակիցներին: Այդ նույն դրամում ներնշտայնը կատաղությամբ հարձակվում է մարքսիստական դիալեկտիկայի վրա: Նա «հայտնադործություն» և անում, թե «ըլիալեկտիկան թակարդ և ծշմարիտ խմացության ճանապարհին», և կոչ և անում ըստ հնարավորին ավելի շուտ հրաժարվել դիալեկտիկայից: Բներնշտայնը հոչալեց մարքսիզմը կանտականության հետ միացնելու անհրաժեշտության հայտնի լոգունդը: Կառուցկու տիպի ցենտրիստների ուղղակի հովանավորության ներքո գերմանական ու ալմորիական սոցիալ-դեմոկրատիայի մեջ սնվեց ու փայտայլեց «Փիլիսոփայող» դրոզների մի ամբողջ խումբ, զրոյնք զբաղված ելին դիալեկտիկական մատերիալիզմի սիստեմատիկ անարդումով: Նրանք ամեն կերպ թուք ու մուր եյին տալիս դիալեկտիկական մատերիալիզմին և զրեցին տասնյակ դրքեր, բարձաթիվ հովվածներ ու բրոշյուրներ, վորոնց մեջ «ապացում եյին», վոր Մարքոն ու Ենդեսը չստեղծեցին իրենց փիլիսոփայական սիստեմը: Նրանք մարտնչում եյին Մարքոն կանոնի հետ, Մատի հետ, Ավենարիուսի հետ և տիպիկ բռնժութական այլ փիլիսոփաների ու փիլիսոփայական ուղղությունների հետ զուգակցելու համար, միայն թե մարքոնդիզմից բնաջնջեն նրա հեղափոխական հոգին, միայն թե վնաս հատցնան դիալեկտիկական մատերիալիզմին:

Ա. Մ. Գորկու հետ ունեցած նամակադրության մեջ լենինը հետեւյալ խոսքերով և բնութագրում փիլիսոփայական այլ սեվիլիոնիզմը.

«Մատերիալիզմը, վորպես փիլիսոփայություն, նրանց մոտ ամենուրեք հալածված է: «Նεue Zeit»-ը, ամենից կայուն ու բանկմաց որդանը, անտարեկը և փիլիսոփայական մատերիալիզմի թունդ կողմնակից, իսկ վերջին ժամանակներս, առանց վորմեւ վերապահումների, տպագրում եր եմափրիոկրիտիկներին: Վորպեսզի այն մատերիալիզմից, վորն ուսուցանում եյին Մարքոնը ու Ենդեսը, հնարավոր լիներ դուրս բերել մեռած քաղքենիություն, այդ ճիշտ չե, ճիշտ չե: Քաղքենիական բալոր հուսանքները սոցիալ-դեմոկրատի-

այի մեջ պատերազմում են ամենից շատ փիլիսոփայական մատերիալիզմի դեմ, ձգում են դեպի կանուը, դեպի նեոկանոնականություն, դեպի ջննագատական փիլիսոփայությունը: Վոչ, այն փիլիսոփայությունը, զորը հիմնավորել ե Ենդելուը «Անտի-Դյուրինդի» մեջ, քաղքենիությունը շեմքի մոտ անդամ չի թողնում»<sup>1</sup>:

Այս փիլիսոփայական ունվիզիոնիզմի ե'լ ավելի լրիվ բնութագրումը լենինը տալիս և նույն 1908 թ. գրված իր հոչակագոր «Մարքսիզմ ու ունվիզիոնիզմ» հոդվածի մեջ, վորտեղ նա գրում է.

«Փիլիսոփայության բնադավառում ունվիզիոնիզմը զնացել է բուրգուական պրոֆեսորական «գլխության» պոչից: Պրոֆեսորները զնում եյին «Հետ դեպի կանուը», —և ունվիզիոնիզմն ել քարշ եր գալիս նեոկանոնականների հետեւյց, պրոֆեսորները կրկնում եյին փիլիսոփայական մատերիալիզմի դեմ հաղարանդամ առաջած տերտերական դռեհկություններ, —և ունվիզիոնիստներն ել, զիջողամտորեն ժպտալով, միթինթում եյին (բառ առ բառ ըստ վերջին հանդրությի), թե մատերիալիզմը վաղուց և «Հերքված» պրոֆեսորները քամահրում եյին Հեդելին, վորպես «աստիկած շան» և, իրենք ել, իդեալիզմ քարոզելով, միայն հազար անդամ ավելի մանր ու գոեւչիկ, քան հեգելյանը, արհամարհանքով ուսերն եյին թոթվում գիալեկտիկայի առթիվ, —և ունվիզիոնիստներն ել նրանց հետեւյց մանում եյին զիտության փիլիսոփայական գոեւհկացման ճահճճը, «խորամանկ» (և հեղափոխական) զիալեկտիկան «պարզ» (և «անդիստ») «եւլուցիայով» փոխարինելով...

Թէ դասակարգային իրական ինչ նշանակություն ունեյին Մարքսի նկատմամբ յեղած նման «ուղղումները», զրա մասին հարկ չկա իսսելու: Բան ինքնին պարզ ե»<sup>2</sup>:

1. Письма Ленина Горькому, стр. 15, 1936.

2. Ленин, Соч., т. XII, стр. 184—185.

Միայն մեր բոլշևիկյան կուսակցությունը, ինչպես ամբողջ ուժով այդ քացահայտված է կուսակցության պատմության դասընթացի մեջ, իր ծաղման առաջին խոկ որից անդադրում պաշտպանում և առաջ է շարժում մարքսիստական ուստունքն ամբողջությամբ, այդ թվում մարքսիզմի թեսրիտական արմատական հիմքը—դիալեկտիկական մատերիալիզմը:

Լենինը ու Ստալինը վեր բարձրացրին մարքսիզմի վելլուսովայության գրուց, այդ գրուց տարան յերեք հեղափոխությունների միջով, կուսակցության ամբողջ պատմության միջով, զարդացնելով ու հարստացնելով գիտական մատերիալիզմն իմպերիալիզմի ու պրոլետարական հեղափոխությունների եպոսայի, յերկրագնդի մեկ վեցերորդ մասում սոցիալիզմի հաղթանակի եպոսայի դասակարգաբի նոր փորձով:

Արդեն լենինի կողմից իրականացված՝ նարոդնիկության իրեական ջախջախութը պահանջեց նարոդնիկության այսպես կոչված սուբյեկտիվ սոցիոլոգիային—նրա «Հերոսների», «քննադատաբար մտածող անհատների» կուլտով, նրա՝ ժաղովրդական մասսայի վերաբերմամբ արհամարհական ու աղայական վերաբերմունքի հետ միասին—հակադրել մարքսիզմի դիտական-պատմա-վիլխովայական ներդաշնակ ու ամբողջական թեորիան: Լենինի «Խոշնչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատությունը հենց իրենից ներկայացնում եր գիտելիտրիկական ու պատմական մատերիալիզմի կլասիկ շարադրումը, կոնկրետացումն ու զարգացումը նախողնիկական սուբյեկտիվիզմի ու իդեալիզմի դեմ մղած պայքարի մեջ:

«Եկոնոմիստների» ու մենշևիկների դեմ ուղղված պայքարն ել նույնպես, ինչպես այդ վայլում կերպով ցույց է տված «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ, հաղեցված է վիլխովայական մեծ բովանդակությամբ: Բանվորական շարժման մեջ տարերայնության ու գիտականության հարաբերակցությունների հարցը, սոցիալիզմը բանվորական շարժման հետմիացնելու անհրաժեշտության հարցը կարելի կլիներ ճիշտ լուծել միայն դիտ-

լեկտիկական մատերիալիզմի հետևողական կիրառման հիմունքով: Մարքսիզմին ամբողջապես թշնամի «Եկոնոմիստների» ու մենշևիկների վուլգարիզմային ու մետաֆիզիկային լենինը Ստալինը հակադրեցին ուստական առաջին հեղափոխության մեծ իրադարձությունների գիտեկտկական անալիզը:

Մարքսիզմի վիլխովայության համար այդ վիլխովայության լիկվիդատորների դեմ, դիալեկտիկական մատերիալիզմը բուրժուական վիլխովայության խլամով նենդափոխելու դեմ մղվող պայքարի հարցերը կուսակցական-քաղաքական բացառիկ նշանակություն ձեռք բերին 1905 թվականի հեղափոխության պարտությանը հաջորդող ժամանակշրջանում:

1905 թ. հեղափոխությունը պարտություն կրեց: Այդ ժամանակավոր պարտություն եր: Սակայն հեղափոխության ամեն տեսակի ուղեկիցները, վորոնք հեղափոխությանը հարել եյին այն ժամանակ, յերբ հեղափոխությունը վերելքի մեջ եր, հեղափոխության պարտությունը մեկնարանում եյին ամեններն ել վոչ իրեւ ժամանակավոր պարտություն, այլ վորակս Ռուսաստանում հեղափոխական շարժման վակատար պարտություն և սկսեցին հեռանալ նրանից: Ինտելիգենցիայի մեջ նկատվում եր քայլայում ու անկումային տրամադրություն: Տեղի յեր ունենում ուսակցիայի հարձակում: Այդ հարձակումը կատարվում եր նաև խորովոգիտական ֆրոնտում: 1907—1909 թվականներն այսպիսի ժամանակներ եյին, յերբ տարածվեց իդեալիստական ամեն տեսակի հոռանքի, միստիկայի ու տերտրաբականության մողան: Գրականադետների ամբողջ մի վոհմակ զբաղված եր հեղափոխությունը թուրք ու մուր տալով, մարքսիզմին թուրքու մուր տալով: Տեղի յեր ունենում անբարոյականության գովերդում: «անհատի կուլտի» անվան տակ: Միայն մահակը, ասում եր լենինը, գրադաքական ու տնտեսական մահակը, ժողովրդական մասսաներին ճնշելու համար այժմ բուրժուականության մողական դիտակտիվական ու աերգական հարցերը չերեք չերեց 1905 թ. հեղափոխությունը թեև պարտություն կրեց, բայց և այսպես կոտրեց այդ մահակը: Մասսաներին հնագանդության

մեջ պահելու համար պահանջվեց, Լենինի խոսքերով, նաև Հոգեկան մաշակ: Այստեղից ել՝ տիրապետող դասակարգերի ձգտումը՝ տարածել իդեալիստական ու տերտերական ռազմունքներ:

Իդեալիստական այդ փոտումը և քայլքայումը, իդեալիզմի ու տերտերականության մոդան իրենց արտացոլումը գտան նաև սոցիալ-դեմոկրատական ինտելիգենցիայի վորոշ մասի մեջ, ինչպես բոլշևիկների, այնպես ել մենշևիկների շարքերում: Սոցիալ-դեմոկրատների մի ամբողջ խումբ (Բողդանով, Բազարով, Ռոժկով, Սուվորով, Վալենտինով, Յուշկեվիչ, Լունաչարսկի և այլք) մկնեց իդեալիզմ քարողել, փորձելով մարքսիզմի փիլիսոփայությունը փոխարինել մախիզմի փիլիսոփայությամբ: Խոսքը փիլիսոփաներ Մախի ու Ավենարիուսի ներկայացրած փիլիսոփայական հոսանքի մասին եր, փիլիսոփաներ, վորոնք իդեալիզմը հրամցնում եյին նրբին ու կոկած ձեռվ:

Մախիզմը սուրյեկտիվ իդեալիզմի տիպիկ փիլիսոփայությունն ե: Տվյալ հոսանքը փիլիսոփայական հիմնական բովանդակությունը՝ կարելի յե շատ կարճառոտ արտահայտել. աշխարհը սուրյեկտի զգացողությունների միակցությունը կամ կոմպլեքսն ե: Մախիզմը, կամ եմպիրիոկրիտիցիզմը այդ յեղակացությանն ե գալիս «մաքրման», «քննադատության փորձի» հետեանքով: Նման «քննադատության փորձի» հետեանքով Մախը և Ավենարիուսը պնդում եյին, վոր մատերիալ աշխարհը, վոր գոյությունն ունի մեր գիտակցությունից անկախ, վոչ այլ ինչ ե, քան յեթե միայն իմ—մարդուս—զգացողությունների կոմպլեքսը:

Սուրյեկտիվ իդեալիզմը, ինչպես հայտնի յե, փիլիսոփայության պատմության մեջ ունի իր բազմաթիվ ներկայացուցիչները: Լենինը «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքի մեջ իրավացիորեն մատնանշում եր, վոր դեռ 1710 թ. յեպիսկոպոս Բերկլին շատ ավելի մեծ հետեօղականությամբ զարգացնում եր նման սուրյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայություն, վորն այժմ վերաբարձրում են Մախն ու Ավենարիուսը և նրանց հետեօրդներ՝ Բողդանո-

լը, Բաղարովը, Վալենտինովը, Յուշկեվիչը և ուրիշները: Բանվոր գասակարգի քաղաքական կուսակցության նկատմամբ յեղած լիկվիդատորության կողքին իր տարածումը գտավ նաև մարքսիզմի փիլիսոփայական հիմունքների նկատմամբ յեղած լիկվիդատորությունը: Ճիշտ ե, մարքսիզմի փիլիսոփայական հիմունքների լիկվիդատորները հանդես եյին դալիս բավականին յերկշուռությամբ: Այդ, Լենինի արտահայտությամբ, «ճնկաչոք բունտ եր»: Իրենց ամբողջ մախիստական բարբաջանքը նրանք հրամցնում եյին մարքսիզմի փիլիսոփայության գրուի ներքո: Դրանից, սակայն, լիկվիդատորությունը՝ մարքսիզմի փիլիսոփայության հանդեպ չեր դառնում ավելի պակաս վտանգավոր: Այն այնպիսի տարածում ատացավ, վոր Լենինն անհրաժեշտ համարեց հիմնովին զբաղվել այդ փիլիսոփայությամբ և այդ ուեակցիոն հոսանքին հակառակ մի մեծ աշխատություն, վորպիսին և «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմը»: Մեզ պատկերացնելու համար այն վիճակը, վորի մեջ այդ ժամանակ գտնվում եր վլագիմիր իլյիչը, թե ինչպիսի կըբառաւթյամբ ու լարվածությամբ նա ձեռնամուխ յեղավ իր փիլիսոփայական աշխատությանը, այսակեզ մեջ կրերենք Ա. Մ. Գորկու հետ լենինի ունեցած արդեն հիշատակված նամակագրության վորոշ տեղերը: Լենինը զբում եր.

«Այժմ լույս են տեսել «Մարքսիզմի փիլիսոփայության ուրվագրձերը»: Յետ կարդացի բոլոր հոգվածները, բացի Սուվորովի հոդվածից (այն կարդում եմ) և յուրաքանչյուր հոդվածից հետո՝ ուղղակի վրդովմունքից կատաղում եյի: Վոչ, այդ մարքսիզմ չե՞: Յեվ ճահճն են խցկվում մեր եմպիրիոկրիտիկները, եմպիրիոմնիստները և եմպիրիումիվումիստները: Հավատացնել ընթերցողին, թե արտաքին աշխարհի ուեալ լինելու «հավատը» «միստիկա» յե, (Բաղարով), ամենից խայտառակ ձեռվ մատերիալիզմը շփոթել կանտականության հետ (Բաղարով ու Բողդանով), աղնոստիցիզմի (եմպիրիոկրիտիցիզմի) և իդեալիզմի (եմպիրիոմնիզմ) այլատեսակություն քարոզել, — բանվորներին «կրոնական աթեիզմ» և

մարդկային բարձրագույն պոտենցիաների հաստվածքում» սովորեցնել (Լուսաշաբակի), —դիալեկտիկայի մասին Ենդելսի ուսմունքը միտոիկա հայտարարել (Բերման), —դարչահոտ աղբյուրից Փրանսական ինչ-վոր «պովիտիլիստներ»՝ ազնուատիկներ կամ մետաֆիզիկներ, սատանան նրանց տանի, դուրս քաշել «Ճանաչողության սիմվոլիստական թեորիայի» (Յուշկեվիչ) հետ մեկտեղ: Վոչ, այդ արդեն չափազանց և: իհարկե, մենք շարքային մարքսիստներ ենք, փիլիսոփայություն շատ չկարդացած մարդիկ, բայց ինչո՞ւ մեզ այդպես վիրավորել և նման բանը մեզ հրաժցնել վորպես մարքսիզմի փիլիսոփայություն: յես ավելի շուտ ինձ չորս կտոր անել կտամ, քան կհամաձայնվեմ մատնակցելու նման բաներ քարոզող որդանին կամ կոլեգիային»<sup>1</sup>:

Վորոշ ժամանակ անց Լենինը նորից գրում է Գորկուն:

«Թերթը յես շլրտում եմ փիլիսոփայությամբ իմ հարբած լինելու պատճառով. այսոր կարդում եմ մի եմպիրիոկրիտիկի ու հայհոյում եմ փողոցային խոսքերով, վաղը՝ մյուսին՝ արդեն մեր եմ հայհոյում: Իսկ իննոկենտին (Դուբրովինսկին) հայհոյում ե և տեղին ե, «Պրոլետարի» հանդեղ անհոգության համար»<sup>2</sup>:

Վերջապես, 1908 թ. Լենինը նստում է իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատությամբ զբաղվելու: Նա հանդում է այն յեզրակացության, վոր անհրաժեշտ և վերջ տալ մարքսիստական փիլիսոփայության դեմ ուղղած այդ յելույթներին: 1909 թ. գարնանը լույս է տեսնում այդ նշանավոր գիրքը:

Բոլքեիկների առաջնորդը, մի մարդ, վորը քաղաքական լարված պայքար և մղում հեղափոխական շարժման պարտության իրազրության մեջ, յերբ հարկավոր և շարքերը հետ պահել խուճապից, հակահարված տալ ամեն տե-

սակ լիկվիդատորներին ու ուղեկիցներին, ժամանակ ե գըտնում, վորպեսզի փիլիսոփայության և բնագիտության վերաբերյալ հատորների ամբողջ լեռնակույտեր մշակի: Այդ բանի հետևանքով նա ստեղծում է մարքսիզմի կլասիկ յերկը, վորը մարքսիստական փիլիսոփայության զարգացման մի նոր ետապ է կազմում: Լենինի գրքի նշանակությունը շատ հեռու անցավ անմիջական այն խնդրի սահմաններից, վոր լենինն իրեն առաջարկել եր—ջախչախել մախիստներին, մարքսիստական փիլիսոփայության լիկվիդատորներին: Այդ գիրքը մարտաշունչ յերկ հանդիսացավ, վորի մեջ բոլքեիկ-ների առաջնորդը փիլիսոփայական ընդհանրացումներ տվեց բնագիտության բնագավառում, և մանավանդ՝ Փիզիկայի բնագավառում կտարարված նորագույն հայտնագործումներին: Նա անգնահատելի մատերիալ տվեց այն հարցի առթիվ, թե դիալեկտիկ-մատերիալիստներն ինչպես պետք ե մոտենան գիտության բնագավառում կտարարված նոր հայտնագործումներին: Այդ գիրքը ներկայումս ել, նրա գրելուց յերեսուն տարի անց, ուղեցույց ասող և հանդիսանում մատերիալիստ-դիալեկտիկների համար, բնագիտության ներկայացուցիչների համար, վորոնք ուղղում են հաստատապես կանոնած մնալ հետեղական-մատերիալիստական գիրքերի վրա: «Համեկ(ր)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ հետեւյալ դնահատականն ե տրվում լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» հանձարեղ աշխատությանը, վորը մարքսիստական գիտության զանձարանում մեծագույն մուծանք և հանդիսանում:

«... Լենինի գիրքը—ավագած է այնտեղ—Բողդանովի, Բաղարովի, Վալենտինովին և նրանց փիլիսոփայական ուսուցիչներ Սվենարիուսի ու Մախի միայն քննադատումը չե, վորոնք իրենց գրվածքներում փորձում ելին նրբացրած ու կոկած իդեալիզմ մատուցելի հակակշիռ մարքսիստական մատերիալիզմին: Լենինի գիրքը միենույն ժամանակ հանդիսանում է մարքսիզմի թեորիական հիմքերի՝ դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի պաշտպանումը և մատերիալիստական ընդհանրացումը կարևոր ու եյական

<sup>1</sup> Письма Ленина Горькому, стр. 18, 1936.

<sup>2</sup> Կույին տեղում, էջ 24:

այն ամենից, ինչ վոր ձեռք է բերել գիտությունն ու, ամենից առաջ, բնադիտությունն ամբողջ պատմական ժամանակաշրջանում, Ենգելսի մահից մինչեւ Լենինի «Մատերիալիզմ և Եմպիրիոկրիտիցիզմ» դրբի լույս տեսնելն անցած ժամանակաշրջանում»<sup>1</sup>:

XX դարի սկզբին վրա հասած նոր եպօխան մարքսիստների առաջ մի ամբողջ շարք նոր խնդիրներ դրեց նաև փիլիսոփայության բնադաշտառում՝ բնադիտության մեջ կատարված այն հեղափոխության կազմակցությամբ, վորն այդ ժամանակ տեղի յեր ունենում: Հենց Ենգելսի մահից հետո (1895 թ.) Փիզիկայի զարգացման մեջ բացառիկ բուռն ժամանակաշրջան վրա հասավ: Մի հայտնագործմանը հետեւում ե հաջորդը: Հայտնագործվում է մատերիայի ելեկտրոնային թեորիան: Ստեղծվում են մատերիայի կառուցվածքի նոր պատկերացումներ, վորոնք կոտրում են հին, մինչ այդ գոյություն ունեցած պատկերացումները: Իմպերիալիզմի եպօխայում, յերբ ամբողջ գծով ուեկցիան մոլեգնում ե, մի ամբողջ շարք իդեալիստական փիլիսոփաներ կառչում են այդ նոր հայտնագործումներին ու սկսում են պնդել, թե մատերիան անհետացել ե, թե մասսան անհետացել ե, մնացել ե միայն եներգիան և այլն: Նրանք, այնուհետև, պընդում են, թե գիտության նորագույն հայտնագործումներն երր թե ապացուցում են իդեալիզմի ուղիղ լինելը, վոր մատերիալիզմն իր թե հենց գիտության կողմից հերքված է: Ինքը Հոռմի պատը կարող եր այդ բոլոր հերյուրանքներից հիացած լինել:

Մարքսիստների առաջ ծագեց այն մասին, թե ինչպես պատասխան տալ այդ նոր հայտնագործումներին, ինչպես դիալեկտիկական մատերիալիզմը «հարմարեցնել» այդ նորագույն հայտնագործումների հետ: Յեվ ահա լենինը իր «Մատերիալիզմ ու Եմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ ցույց տվեց, վոր բնադիտության նորագույն հայտնագործումները միայն հաստատում են դիալեկտիկական մատերիալիզմի ճշտությունը: Նա ցույց տվեց, վոր

1 «Համկ(ր)կ պատմության համառոտ դասընթաց», եջ 98, Հայոց բարեպատ, եջ 138—139:

մատերիայի կառուցման հին թեորիան կրախի յենթարկվեց, վոր այն արդեն ապրել ե իր դարը և փոխարինվում ե նոր թեորիայով: Նա ցույց տվեց, վոր այդ ամենը վկայում է մատերիայի անսպառելիության մասին, այն մասին, վոր մեր դիտելիքներն ալելի ու ալելի խորն են գնում, և ամենելին ել վոչ այն մասին, թե իրը մատերիան անհետանում է: Մարքսիզմը ստեղծագործ կերպով կիրառելով այդ նոր հայտնագործումների վերաբերմամբ, լենինը շատ առաջ մղեց մարքսիստական փիլիսոփայության զարգացումը:

Զարգացնց ուշագրավ է, վոր այդ նույն ժամանակաշրջանում ընկեր Ստալինը, աշխատելով Անդրկովկասում, հսկայական ուշագրություն ե նվիրում փիլիսոփայական հարցերին: 1906—1907 թ.թ. ընկեր Ստալինը թեորիական մի ամբողջ շարք հոդվածներում, վորոնք միախմբված են «Անարխիզմ, թե սոցիալիզմ» ընդհանուր վերնադրով, բացառիկ խորությամբ զարգացնում ե դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի հարցերը: Ընկեր Ստալինը կովկասում իդեալիստական լարված պայքար ե մղում մարքսիստական փիլիսոփայության հիմունքների համար ընդեմ կովկասում յեղած մի անարխիստական խմբի, վոր լույս եր ընծայում «Հոբատի» թերթը, վորը ճղճղանությամբ յելնում եր դիակտիկական մատերիալիզմի դեմ: «Հոբատի»-ի փիլիսոփայության անարխիստների դեմ ուղղած խորը բովանդակություն ունեցող հոդվածների մեջ ընկեր Ստալինը պարզաբանում ե, թե ի՞նչ բան ե դիալեկտիկական մեթոդը, ի՞նչ բան է մատերիալիստական թեորիան, ի՞նչ բան է պատմական մատերիալիզմը: Ընկեր Ստալինն այդ հոդվածների մեջ ծավալուն կերպով շարադրեց Ֆոյերբախի հայեցողական մատերիալիզմի, Հենգելի, ամբողջությամբ վերցրած, փիլիսոփայության համար կարևոր հանդիպության և մանավանդ նրա հեղափոխական դիալեկտիկայի հանդեպ մարքսիստական փիլիսոփայության վերաբերմունքի հարցերը:

Մենքելիկական դրականագետներից վոմանք, վորոնք դրում ելին փիլիսոփայության հարցերի մասին (Դերորին, Ակսելուով), բոլեկիզմի դեմ տածած իրենց չարությամբ աշխատում ելին այն ժամանակ զրապարտիչ կերպով պնդել, թե

մախիզմը վոչ այլ ինչ ե, քան յեթե բոլշևիզմի փիլիսոփա-  
յությունը: Մինչեռ պատմական անխախտ փաստ ե այն,  
վոր հենց բոլշևիկները, հենց նրանց ղեկավարներ Լենինն ու  
Ստալինն եյին, փորսնք—իդեական քայլացման, կուսակցու-  
թյունից ինտելիգենցիայի փախուստի իրադրության մեջ,  
կուսակցության գեմ լիկիդատորների ուղղած սանձարձակ  
պայքարի իրադրության մեջ—վեր բարձրացրին դիալեկտի-  
կական մատերիալիզմի դրոշը: Լենինի «Մատերիալիզմ և  
եմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը նոր ետապ եր մարք-  
սիստական փիլիսոփայության զարդացման մեջ:

«Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» IV  
գլուխում, վորաեղ խոսվում ե այն մասին, թե ինչպես տեղի  
ունեցավ բոլշևիկների՝ ինքնուրույն մարքսիստական կու-  
սակցության ձևավորումը, ընդուժված ե, վոր «Լենինի  
«Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գիրքը այդպիսի կու-  
սակցության թերիական նախապատրաստությունն եր»<sup>1</sup>:

Յեվ հետագա ժամանակաշրջանում Լենինն ու Ստալինն  
անդադրում պայքար են մղում մարքսիզմի փիլիսոփայու-  
թյան համար, զրազվում են դիալեկտիկական մատերիա-  
լիզմի հետագա մշակմամբ: Իմպերիալիստական առաջին  
համաշխարհային պատերազմի տարիներին բանվոր դասա-  
կարգի կուսակցության, առաջ պատմական նոր խնդիրներ  
ծառացան: Այդ ժամանակ Լենինը, առանձին ուսումնասի-  
րություն պատրաստելով մատերիալիստական դիալեկտիկա-  
յի մասին, կազմում է իր հոչակալոր «Փիլիսոփայական տետ-  
րերը»: Բոլշևիկյան կուսակցության լոգունգը՝ իմպերիա-  
լիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վե-  
րածելու մասին՝ լենինյան հեղափոխական դիալեկտիկայի  
փայլուն որինակն ե հանդիսանում:

Մեկ, առանձին վերցրած, յերկրում սոցիալիզմի հաղ-  
թանակի հնարավորության մասին 1915 թ. Լենինի կատարած  
մեծ հայտնագործությունը նոր քայլ եր նշանակում  
մարքսիզմի զարդացման մեջ: Մատերիալիստական դիալեկ-  
տիկան վարպետորեն կիրառելը հնարավորություն տվեց

1 «Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթաց», եջ 136, Հար-  
քաղչառա, եջ 190:

Լենինին մարքսիզմը նոր բովանդակությամբ հարստացնելու  
և պրոլետարիատի կուսակցությանը առաջիկա պայքարի  
համար անհաղթելի զենքը մատուցելու:

Յեվ խորհրդային իշխանության տարիներին, սոցիալիս-  
տական հեղափոխության տարիներին Լենինն ու Ստալինը  
շարունակում են մարքսիզմի փիլիսոփայության հարցերին  
առաջնակարգ նշանակություն տալ:

1921 թ. պրոֆմիութենական դիմոկրատիայի ժամանակի,  
տրոցիկստների ու բուխարինականների դավաճանանական գծի  
գեմ ուղղած պայքարում, վորոնք աշխատում եյին խափա-  
նել պրոլետարիական դիմոկրատրան, Լենինը ջարդություր  
և անում մարքսիզմին ամրողապես թշնամի նրանց «մեթո-  
դոլոգիան»: Մերկացնելով Բուխարինի ու Տրոցկու եկլեկտի-  
ցիզմն ու ամենագուեհել սովորական հիմնական պահանջնե-  
րը. առարկան ուսումնասիրել բազմակողմանիորեն, առար-  
կան վերցնել՝ իր զարդացման մեջ, յուրաքանչյուր հարցի  
ժոտենալ պրակտիկայի՝ վորպես ճշմարտության չափանիշի՝  
տեսակետից և, վերջապես, հասկանալ, վոր աբստրակտ  
ճշմարտություն չկա, վոր ճշմարտությունը միշտ կոնկրետ  
է: Դիալեկտիկայի այս պահանջները կիրառելով պրոֆմիու-  
թյունների հարցի վերաբերմամբ, Լենինը տալիս է պրոֆ-  
միությունները վորպես կոմունիզմի դպրոց նշանավոր բնո-  
րոշումը: 1922 թ. Լենինը գրեց իր «Մարտնչող մատերիա-  
լիզմի նշանակության մասին» նշանավոր հոդվածը, վոր  
ծրագիր գարձակ մարքսիզմի փիլիսոփայության համար,  
դիալեկտիկական մատերիալիզմի հետագա զարդացման հա-  
մար մղվող պայքարի մեջ:

Տրոցկիստական-բուխարինական գարշելմների գեմ մղած  
պայքարում պաշտպանելով ու զարդացնելով մեկ յերկրում  
սոցիալիզմի հաղթանակի հնարավորության վերաբերյալ լի-  
նինյան ուսմունքը, ընկեր Ստալինը դիալեկտիկական մատե-  
րիալիզմի մեթոդը փայլուն կերպով կիրառեց դասակար-  
գային պայքարի ու սոցիալիստական շինարարության հար-  
ցերի ամրող միագումարի նկատմամբ: Դիալեկտիկայի կլա-  
սիկ տիպարներ հանդիսանում են՝ կապիտալիզմի զարդաց-  
ման անհավասարաչափության որևէքի, նեպի հակասական,

յերկակի բնույթի վերաբերյալ հարցի, կուտանտեսություն-ների բնույթի վերաբերյալ հարցի և այլն՝ ստալինյան մշակումը: Ընկեր Ստալինը վոչնչացնող ջախջախման յենթարկեց, քարը քարի վրա չթողեց հավասարակշռության բուրժուական մեխանիստական թեորիայից, վորը լենինիզմի դավաճան ու թշնամի Բուխարինը աշխատում եր հակադրել դիալեկտիկական մատերիալիզմին:

Մարքսիստական-լենինյան ամբողջ թեորիայի համար, գիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի հետագա զարգացման համար հոկայական նշանակություն ունեցան այն ցուցումները, վոր 1930 թ. վերջին տվեց ընկեր Ստալինը մենշևիկող իդեալիստների ու մեխանիստների դեմ՝ գիալեկտիկական մատերիալիզմին դավաճանած յերկու քողարկված, շղարշված տեսակների դեմ մղած պայքարի հարցի առթիվ:

### III

Դիալեկտիկական մատերիալիզմը, վորպես մարքսիզմի հեղափոխական հոգի, իրենից մարտական վենք և ներկայացնում դասակարգային պայքարի կարենություն հարցերի անսխալ լուծման համար: Այստեղ մեր կուսակցության պատմությունից միքանի որինակներ բերենք, վորոնցով կարելի յե ակնհայտնի տեսնել, թե ինչպիսի նշանակություն ե ունեցել այդ զենքը: Վերցնենք այնպիսի մի հարց, վորպեսին անցյալ դարի վերջում մարքուսաների՝ նարոգնիկների դեմ ուղղած պայքարի հարցն եր: Ինչպես հայտնի յե, մեղանում Ռուսաստանում նարոգնիկությունը մարքսիզմի տարրածման ուղու և սոցիալ-դեմոկրատական շարժման զարգացման ուղու վրա իդեալիստ խոչընդուներ: Սոցիալ-դեմոկրատիայի զարգացման ուղին իդեալիստ հարթելու համար հարկավոր եր իդեալիստ լիակատար ջախջախման յենթարկել նարոգնիկական հայցքները: Դրա համար հարկավոր եր տալ իր սեփական, մարքուսական պատասխանը Ռուսաստանում տեղի ունեցող զարգացման բնույթի հարցերին, այն բոլոր հարցերին, վորոնք այդ ժամանակաշրջանում ծառացան բանվորական շարժման առջեւ:

Մենք գիտենք նարոգնիկների դեմ մարքսիստների մղած այդ ամբողջ պայքարի քաղաքական նշանակությունը: Այդ հարցերին մոտենալու նարոգնիկական ու մարքսիստական մեթոդները համեմատելիս ակնհայտորեն յերեան և գալիս իրականության հանդեպ նարոգնիկների հակադիալեկտիկական, մետաֆիզիկական տիպիկ մոտեցման ու մարքսիստական դիալեկտիկական մոտեցման միջև յեղած ամբողջ տարբերությունը:

Ընկեր Ստալինի՝ «Անարխիզմ թե սոցիալիզմ» թեմայի մասին վերեւում արդեն հիշատակված հոգվածների մեջ՝ իր բովանդակությամբ և խորությամբ այդ հարցերի բացառիկ գիրությունը այս հարցերի բացառիկ գիրությունն է արդարացնելու մեջ՝ իր առաջնայի կարենությունը պահանջներից մեկն այն է, վոր կյանքը չէ իտիտենք վորպես ինչ-վոր անփոփոխելի, սառած մի բան: Կյանքը, ինչպես բնության մեջ, այնպես եւ հասարակության մեջ հարկավոր ե գիտել իրրե մշտնջենական շարժման, ծաղման ու զարգացման մեջ գտնվող մի բան: Կյանքում միշտ գոյություն ունի այն, ինչ աճում ե, և այն, ինչ մահանում ե, նրա մեջ անպայման ինչ-վոր բան մահանում ե և մինույն ժամանակ անպայման՝ ծնվում: Կյանքում միշտ գոյություն ունի նորը և հինը: Դրա համար ել, յեթե մենք ուզում ենք աշխարհը գիտել գիտեկտիկութեն, մենք պետք ե նայենք, ինչպես արտահայտվել ե ընկեր Ստալինը, «թե ուր ե գնում կյանքը, կյանքում ինչը մահանում ե և ինչը ծնվում»:

Դիալեկտիկական մեթոդի մյուս պահանջն այն է, վոր պարզ տեսնենք, թե ինչպես այն, ինչը կյանքում կորցնում է հողը, զնում և հետ, մահանում ե, վերջիվերջո պետք ե հաղթված լինի, թեկուզ և ալյալ մոմենտում այն գեռ ուժեղ յերեա: Իսկ այն ամենը յինչ կյանքում աճում, զարգանում ե, նորն ե կազմում, ինչպես ել վոր նա տվյալ մոմենտում թույլ լինի, վերջիվերջո պետք ե հաղթանակի: Յեկելով մարքսիստական գիտեկտիկական մեթոդի այդ հիմնական բնութագծերից, ընկեր Ստալինը գրել է.

«XIX դարի 80-ական թվականներին ոռուսակրտն հեղափոխական ինտելիգենցիայի շրջանում նշանավոր վեճ առաջացավ։ Նարունիկներն առում եյին, վոր գլաւավոր ուժը, վորը կարող ե իր վրա վերցնել «Ռուսաստանի ազատագրությունը», — դա չքավոր գյուղացիությունն է։ Ինչո՞ւ, հարցնում եյին նրանց մարքսիստները։ Վորովհետեւ, — առում եյին նրանք, — գյուղացիությունն ամենքից ավելի բազմամարդ ե և միաժամանակ ամենքից ավելի չքավոր և ոռուսական հասարակության մեջ։ Մարքսիստները պատասխանում եյին, — ճիշտ ե, վոր գյուղացիությունն այսոր մեծամասնություն ե կազմում և շատ չքավոր ե. բայց միթե բանն այդ ե։ Գյուղացիությունն արդեն վազուց մեծամասնություն ե կազմում, բայց մինչեւ այսոր նա առանց պրոլետարիատի ոգնության վոչ մի նախաձեռնություն հանդիս չի բերել «ազատության» համար մղջող պայքարում։ Իսկ ինչո՞ւ։ Վորովհետեւ գյուղացիությունը վորակես դաս որ-որի քայլքայլում ե, բաժանվում ե պրոլետարիատի և բուրժուազիայի, մինչդեռ պրոլետարիատը, վորակես դասակարգ, որորի աճում ե և ամրապնդվում։ Յեկ չքավորությունն այստեղ վճռող նշանակություն չունի. «բոսյակները» գյուղացիներից սովելի չքավոր են, սակայն վոչ վոք չի կարող ասել, վոր նրանք իրենց վրա կվերցնեն «Ռուսաստանի ազատագրությունը»։

Բանք միայն այն ե, թե ով ե աճում և ով ե ծերանում կյանքում։ Յեկ վորովհետեւ պրոլետարիատը միակ դասակարգն ե, վորն անընդհատ աճում ե և կյանքի յե ձգտում, դրա համար ել մեր պարտքն ե՝ կանգնել նրա կողքին և այն ճանաչել վորակես ոռուսական հեղափոխության գլխավոր ուժը, — այսպես եյին պատասխանում մարքսիստները։ Ինչպես տեսնում եք, մարքսիստները դիալեկտիկական տեսակետով եյին նայում հարցին, այն ժամանակ, յերբ նարունիկները գտառում եյին մետաֆիզիկութեան, վորովհետեւ կյանքի

վրա նայում եյին վորպես «մի կետում սառած բանի վրա»<sup>1</sup>։

Ընկեր Ստալինն այդ որինակի վրա հիանալիորեն ցույց տվեց մարքսիստական թեորիայի ամբողջ ուժը, իրականությանը դիալեկտիկորեն մոտենալու մեթոդի ուժը։ Մեզ պատկերացնենք Ռուսաստանը XIX դարի վերջերին։ Բանվոր դասակարգը թեև արդեն գործադուլներով և այլնով սկսում ե իրեն գեալ տալ, բայց և այնպես առաջին հայացքից զեռ քիչ նշմարելի մեծություն ե ներկայացնում։ Բնակչության հիմնական մասսան դյուղացիությունն ե կաղմում։ Նարունիկները, վորակես տիպիկ մետաֆիզիկներ, հասկանալով հասարակական զարգացման որենքները, չեն տեսնում, թե ինչը կյանքում աճում ե, ինչը քայլքայլում, ուստի և կողմնորոշվում են զեալի գյուղացիությունը։ Նրանք յենում են այն բանից, վոր գյուղացիությունը յեղել ե, և և լինելու յե Ռուսաստանի բնակչության հիմնական մասսան։ Նրանք չեն ուզում տեսնել այն իրական պրոցեսները, վորոնք տեղի յեն ունենում կյանքում։ Բնդհակառակական մատերիալիզմի մեթոդը, մարքսիստները, Ռուսաստանի իրականության անմիջի նկատմամբ, կիրառելով դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդը, աճում եյին. տվյալ մոմենտում բանվոր դասակարգը առաջին հայացքից զեռ քիչ նշմարելի մեծություն ե կազմում, ամբողջ բնակչության անհան փոքրամասնությունն ե։ Սակայն, այն բանի կապակցությամբ, վոր Ռուսաստանը հաստատուն վոտք ե գրել կապիտալիստական զարգացման ուզին, մեր յերկրում կապիտալիզմի զարգացման կապակցությամբ՝ բանվոր դասակարգը ներկայացնում է այն ուժը, վորն անընդհատ աճում և մեծանում ե։ Հարկավոր ե կողմնորոշվել զեալի այդ ուժը, վորովհետեւ նա իրենից ներկայացնում ե այն ողակը, վորը Ռուսաստանը հեղափոխական պայքարի միջով կտանի զեալի սոցիալիստական կարգերը։

Ամեն մի թեորիա մի վորեւ բան արժե, յեթե այդ թեո-

1 Ստալին, Անարխիզմ կամ սոցիալիզմ։ Մեջ ե բերված և. Բերխայի «Անդրկոմիսակ բուշեկիյան կազմակերպությունների պատմության հարցի չուրջը» գրքից, էջ 116, Հայկուսհրատ, էջ 99—100։

բիան կյանքում իր հաստատումն եւ ստանում։ Պըակտիկան ամեն մի թեորիայի լավագույն ստուգումն ե։ Յեկ, ընդհակառակը, ամեն մի թեորիա, ինչպես և ամեն մի գիտություն, ինչպես ել վոր նա արտաքնապես գեղեցիկ յերեա, ինչպես ել վոր նա արտաքնապես փայլիլի ծիածանի բոլոր ճառագայթներով, յեթե նա կյանքում, պրակտիկայում չեւ ստուգում, նա վոչինչ ե, վոչ մի բան չարժե։

Կյանքը ջարդուփչուր արեց նարողնիկների «թեորիաները»։ Ո՞վ այժմ կարող ե քիչ թե շատ լրջորեն խոսել մուսաստանի զարդացման հարցի վերաբերյալ, ինչպես և մյուս հարցերի առթիվ նարողնիկության թեորիական հայցքների մասին։ Ընդհակառակը, կյանքը ցույց տվեց, թե ինչքան իրավացի եյին մարքսիստներն այդ բոլոր հարցերում։ Մարքսիստական-լենինյան թեորիան տունում ե իր լիակատար տրիումֆը։

Այդ որինակը ցույց ե տալիս հասարակական զարդացման որենքների իմացության վրա հենված հեղափոխական թեորիայի գիտական նախատեսման վիթխարագույն նշանակությունը։ Այդ որինակը ցույց ե տալիս դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդի ամբողջ ուժը։ Նա ասում ե այն մասին, վոր մարքսիստական դիալեկտիկական մեթոդը հեղափոխական կուսակցության ձեռքում իրենից ներկայացնում է իդեալական զորեղագույն զենք, վորը, ինչպես ընկեր Ստալինն ե ասում, հնարավորություն ե տալիս վերցնելու ամենից անմատչելի ամբոցները։

Այժմ քննարկենք մի ուրիշ որինակ, վորը կրկին իր ամբողջ ուժով բացահայտում ե դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդի նշանակությունը՝ դասակարգացին պայքարի ամենասուր հարցերը անալիզի յենթարկելիությունը։

Բոլցեկիզմի հեղափոխական տակտիկայի հիմունքները՝ ինչպես այդ ցույց ե տրված «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ, մշակել ե լենինը իր «Սոցիալ-դեմոկրատիայի յերկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» գրքում 1905 թվին։ Այդ գիրքը, ինչպես և բոլցեկիզմի տակտիկական գծի բոլոր պրոբլեմների լուծումը, ամբողջովին հագեցված ե հեղափոխական մարքսիստական

դիալեկտիկայով։ Կարելի կլիներ ասել այսպես։ Հնարակությունը և հիմնովին ըմբռնել բոլցեկտիկայի հիմնական հարցերն առանց հասկանալու այն, թե ինչպես են այդ հարցերը լուծվել դիալեկտիկական մոռացման հիման վրա։ Բոլցեկիների տակտիկական գծի բնորոշ հիմնական հարցերից մեկը բուրժուա-ղեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեղեմոնիայի հարցն ե յեղել։ Յեկ բոլցեկիները, և մենցեկիները յելնում եյին այն բանից, վոր առաջիկա հեղափոխությունն իր բնույթով, գոնե սկզբում, բուրժուական հեղափոխություն ե լինելու։

Այնուհետև սկսվել են լուրջ տարածայնություններ։ Մենցեկիները դատում եյին, վորպես ամենից ախպիկ մետա-ֆիզիկներ, վորպես մարդիկ, վորոնք ամբողջովին ու լիովին իրմիւ են գործին ֆորմալ-տրամարանորեն մոտենալու մեջ։ Քանի վոր մեղանում սպասվում է բուրժուական հեղափո-խություն, ասում եյին նրանք, ապա այդ հեղափոխության մեջ գլխավոր շարժիչ ուժը պետք ե լինի բուրժուազիան։ Այդպես ե յեղել, ասում եյին նրանք, բուրժուական բնույթի այն հեղափոխությունների մեջ, վորոնք տեղի յեն ունեցել մինչ այդ ժամանակ, այդպես ել պետք ե լինի նաև մեղա-նում։ 1789 թ., ֆրանսական բուրժուական հեղափոխության ժամանակ, հեղափոխական զիխավոր ուժը բուրժուազիան եր, վորը գնում եր այսպես կոչված յերրորդ գասի գլուխ անցած։ Պարզ ե, վոր մեղանում ել գործը նույն այդ կերպ պետք ե կատարվի։ Քանի վոր առաջիկա հեղափոխության վետք ե իր պետք ե խաղա բուրժուազիան, ապա մեջ գլխավոր դեր պետք ե խաղա բուրժուազիան, զամանակը դասակարգին, զատում եյին մենցեկիները, բուր-ժուազիայի պոչի դեր, ոպողիցիոն մղիչի դեր ե հատկաց-վում և այլն։ Հեղափոխության մեջ բանվոր դասակարգը վոչ մի ինքնուրույն, առավել ևս զեկավարող դեր, համաձայն մենցեկիկան իմաստունների հայացքների, ունենալ չի կարող և չպետք ե ունենա։ Այդ գիծն ամբողջովին ու լիովին պաշտ-պանում և հիմնավորում եր նաև Պիեմանովը, չնայած այն բա-նին, վոր նա չափազանց շատ ու մանրամասն համաթեսրիա-կան հաստատումով խոսել ե դիալեկտիկական մատերիալի-կան դիալեկտիկական մարքսիստական

54

հոնչպես եյին գործին նայում բոլցեկիները։ Լենին

ասում եր, վոր գիտեկտիկական մեթոդը պահանջում է, փորձեազի մենք չենքն գատարի, վոչինչ չասող անալոգիաներից: Դիմեկտիկական մեթոդը պահանջում է պատմական յուրահատուկ իրադրության կոնկրետ անալիզ: Այո, մատնանշում եր Լենինը, հեղափոխությունը մեղանում բուրժուական ե լինելու, բայց նա ամեննեին ֆրանսական բուրժուական հեղափոխության պարզ կրկնությունը չի հանդիսանում: Մեր հեղափոխությունն ունի իր սպեցիֆիկ առանձնահատկությունները: Լենինն առաջադրում է հետեւյալ դրույթը. առաջիկա բուրժուական հեղափոխության մեջ բանվոր դասակարգը հանդես է գալու իրքեւ հետեմոն: Այդ հակասակա՞ն է: Իհարկե, հակասական է, բայց դա դիմեկտիկական իսկական հակասություն է, վորը ճիշտ կերպով արտացոլում է կյանքի իսկական հակասությունները:

Յերբ Ֆրանսիայում տեղի ունեցավ բուրժուական հեղափոխությունը (1789 թ.), բանվոր դասակարգը իրենից դեռ շատ անկազմակերպ և սակայ գիտակից ուժ եր ներկայացնում: Նա դեռ վոչ բոլորովին եր շերտավորվել բուրժուազիայից, նրա հետ հանդես գալով այսպես կոչված յնըրորդ դասի սահմաններում: Դասակարգային պայքարը պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև դեռ այսպիսի սուրբնույթ չեր կրում, ինչպես այժմ է: Բուրժուազիան դեռ կարող եր հանդես գալ վորպես դեկավար ուժ ֆեոդալիզմի դեմ մղած հեղափոխական շարժման մեջ:

Միանդամայն այլ պայմաններ ստեղծվեցին մեզանում XX դարի սկզբին: Առաջինը, բանվոր դասակարգն արդեն դադարեց «իր մեջ» դասակարգ լինելուց, նա դարձավ դասակարգ «իր համար»: Նա արդեն ուներ իր գիտականորեն մշակված իդեոլոգիան, գիտական կոմունիզմի իդեոլոգիան, վոր ստեղծել են բանվոր դասակարգի առաջնորդներ Մարքուն ու Ենդելսը: Այդ ժամանակ մեր յերկրում բանվոր դասակարգն արդեն աճեց ու դարձավ նշանակելի ուժ, ուներ իր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Դասակարգային հակամարտությունները բանվոր դասակարգի ու բուրժուազիայի միջև արդեն կարողացան ծալվալի իրենց ամբողջ ուժով: Մեզանում լիբերալ բուրժուազիան, իսկա-

պես ասած, արդեն ավելի շատ վախենում եր բանվոր դասակարգի յելույթներից, քան ցարիզմից: Լենինը տալիս է իր ուժով բացառիկ անալիզ այն բանի, թե ինչու լիբերալ բուրժուազիան մեզանում շահագրգուված չի յեղել բուրժուական հեղափոխությունը մինչև վերջը հասցնելու մեջ: Իբրև հեղափոխական դիմեկտիկայի խոշորագույն վարպետ, Լենինը ցույց է տալիս, վոր բանվոր դասակարգը շահագրգուված է բուրժուական հեղափոխությունը հասցնելու մինչև վերջը:

«...Բուրժուազիային ձեռնտու յե, — գրում է Լենինը, — պլոյետարիատի դեմ հենվել հնության միքանի մնացորդների, որինակ՝ միավետության, մըշտական բանակի վրա և այլն: Բուրժուազիային ձեռնտու յե, վոր բուրժուական հեղափոխությունը չափազանց վճռականորեն չալլի-չորսի հնության բոլոր մնացորդները, այլ նրանցից միքանիսը թողնի, այսինքն, — վոր այդ հեղափոխությունը լիովին հետևողական չլինի, մինչև վերջը չչանի, վճռական և անխնա չլինի... Բուրժուազիայի համար ավելի ձեռնտու յե, վոր բուրժուական-դեմոկրատական ուղղությամբ անհրաժեշտ բարենորդումները կատարվեն ավելի գանգաղ, ավելի աստիճանաբար, ավելի զգուշ, ավելի անվճռական, ուժորմների, և վոչ թե հեղափոխության միջոցով... վոր այդ բարենորդումներն ինչքան կարելի յե քիչ զարդացնեն հասարակ ժողովրդի, այսինքն՝ գյուղացիության և հակամական բանվորների հեղափոխական ինքնազործունեյությունը, նախաճեռնությունը և յեռնդը, վորով-հետև այլապես բանվորների համար ավելի հեշտ կենի, ինչպես Փրանսացիներն են ասում, «Հրացանը մի ուսից մյուսը զցել», այսինքն՝ հենց իր՝ բուրժուազիայի դեմ ուղղել այն գենքը, վոր նրանց կտա բուրժուական հեղափոխությունը, այն ազատությունը, վոր նա կտա, այն դեմոկրատական հիմնարկները, վորոնք նորտատիրությունից մաքրված հողի վրա առաջ կդան:

Ընդհակառակը, բանվոր դասակարգին ավելի ձեռքունտու յե, վոր բուրժուական-դեմոկրատական ուղղությամբ բոլոր անհրաժեշտ բարենորդումները կատարվեն հենց վոչ թե ոեփորմատորական, այլ հեղափոխական ճանապարհով, վորովհետեւ ոեփորմատորական ճանապարհով քաշքաների, ձգձգումների, ժողովրդական որդանիզմի փառդ մասերի տանջալիութեն դանդաղ մահացման ուղին եւ: Նրանց փառելուց ամենից ավելի և ամենից շատ տուժում են պրոլետարիատը և գյուղացիությունը: Հեղափոխական ուղին պրոլետարիատի վերաբերմամբ արագ, ամենից ավելի քիչ հիվանդագին ոպերացիայի ուղին եւ, փոռդ մասերն ուղղակի կտրելու ուղին, միապետության և նրան համապատասխանող նողկալի ու դարշելի, փտած և փտությամբ ողն ապականող հիմնարկների վերաբերմամբ նվազագույն զիջողականության և զուշության ուղին եւ:

«Այդ պատճառով ել, — շարունակում եր լենինը, — պրոլետարիատը հանրապետության համար սլայքարում և առաջին շարքերում, արհամարհանքով հետ մդելով հիմար ու նրան անարժան խորհուրդները՝ հաշի առնելու այն, թե արդյոք բուրժուազիան յերես չի դարձնի»<sup>1</sup>:

Սրանք են վլադիմիր իլյիչ լենինի խորագույն, խորապես դիալիկտիկական մտքերը, վոր պատմական կոնկրետ իրականության անալիզի նկատմամբ դիալիկտիկական մատերիալիզմի մեթոդի տիպարներ են տալիս:

Վերցնենք մի ուրիշ հարց, բուրժուալեմոկրատական հեղափոխության մեջ բոլշևիկների տակտիկայի հայտքների հետ կապված հարցը, այն հարցը, թե սոցիալ-դեմոկրատները մասնակցելու յեն արդյոք ժամանակավոր հեղափոխական կառավարությանը: Ինչպես հայտնի յե, մենշևիկները լիովին լինելով իրենց ամենամիասակար քաղաքական կանցեղիցիայի դերին, գործին մետաֆիզիկ մոտեցում ունենալու

1 Լենին, Հատ. VIII, էջ 57—58 և 94, Հայկուսհրատ, էջ 80—81  
և 100:

դերին, մերժում եյին այդպիսի մասնակցությունը: Մենակիների հիմնական փաստարկն այս եր կառավարությունը բուրժուական և լինելու, հետեւարար, սոցիալ-դեմոկրատիան չպետք և մասնակցի այդպիսի կառավարությանը: Այն դեպքում, յեթե անդամ նա մասնակցելու յե, ապա նա կանոնացն այսպէս: Վոր թույլ տվեց Փրանսացի սոցիալիստ Միլյերանը՝ մասնակցելով բուրժուական կառավարությանը:

Բոլշևիկները, հերքելով մենշևիկական այդ «փաստարկները», ասում եյին, վոր այդ տիպիկ մետաֆիզիկ հարցադրում եւ: Բոլշևիկներն ասում եյին, վոր ամենից առաջ հարկավոր եւ կոնկրետ կերպով անալիզի յենթարկել, թե ի՞նչ ժամանակավոր հեղափոխական կառավարություն եւ լինելու այդ: Այդպիսի կառավարությունը, ասում եյին բոլշևիկները, կարող եր միայն առաջանալ զինված ապստամբության հետեւանքով, ժողովրդական մասսաների զինված պայքարի հետեւանքով, նպատակ ունենալով տաղակել ցարական ուժիքը: Հետեւարար, իր դասակարգացին բնույթով այդ կառավարությունը կարող եր լինել միայն հեղափոխական-դեմոկրատական կառավարությունը, վորը կոնքրետացնի բանվորների ու գյուղացիների շահերը: Ֆրանսախայում, ասում եյին բոլշևիկները, խոսքը վերաբերում եր բուրժուական կառավարությանը՝ Միլյերանի մասնակցելուն այնպիսի ժամանակարգությանը յերեխի միակ դիմումը կառավարության դասակարգի տիպիկ ուեկցիոն կառավարությունն եր: Պարզ եւ, վոր Միլյերանը, մանելով այդպիսի կառավարության մէջ, գալաճանեց բանվոր դասակարգի շահերին, դասաճանեց սոցիալիզմի շահերին:

Իսկ մեզանում միանդամայն այլ պայմաններ են: Ժամանակավոր հեղափոխական կառավարություն կարող է ստեղծվել միայն մի իրադրության մեջ, յերբ յերկրում տեղի ունի հեղափոխական սփոռուացիա, միայն բանվորների ուղիւնքությանը դիմումը կառավարության դասակարգի տիպիկ ուեկցիոն կառավարությունն եր: Դիալիկտիկական կոնկրետ մոտեցում և պահանջում: Դիալիկտիկական ասում ե, վոր ամեն մի հարց

Հարկավոր ե վերցնել վորոշիրադրության մեջ, ժամանակի ու տարածության մեջ, և վոչ թե հիմնվել դատարկ անալրդիքաների վրա, չելնել մետաֆիզիկական «այլպես յեղել ե այլպես ել այսուհետև պետք ե լինի» Փորձութայից:

Այդ հարցը, ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ սոցիալ-զեմոկրատների մասնակցության հարցը, ունի վոչ միայն պատմական հետաքրքրություն: Այժմ, նոր պայմանների մեջ, հեղափոխական շարժման զարգացման միանգամայն այլ իրադրության մեջ, մի շարք յերկրների կոմունիստների առաջ կանգնում են այնպիսի կառավարություններին մասնակցելու հարցերը, ինչպես, ասենք, իսպանիայի հանրապետության կառավարությանը, կամ թե Չինական հանրապետության կառավարությանը մասնակցելու հարցերը: Այդպիսի հարցերը ճիշտ լուծել կարելի յետիայն հենված լինելով մարքսիստական-լենինյան թեորիայի վրա, պատմական իրականության կոնկրետ վերլուծության վրա, այնպիսի իրականության, վորպիսին գոյություն ունի այդ յերկու յերկրներում:

Նման կարգի հարցերի անսխալ լուծումը հնարավոր ե միայն հենված լինելով այսորիա բոլոր իրադրություններին դիալեկտիկորեն մոտենալու վրա, հենված լինելով պատմական զարգացման որենքների ճանաչման վրա: Նման կարգի հարցերի վճռման մեջ հեղափոխական դիալեկտիկայի այն տիպարները, վորոնք տալիս են լենինն ու Ստալինը, տալիս ե բոլշևիկների կուսակցությունը, բոլոր յերկրների կոմունիստների համար իրենց պրակտիկ հեղափոխական աշխատանքի մեջ ուղեցույց թել են հանդիսանում:

Այդ որինակների վրա մենք կարող ենք տեսնել ամբողջ ուժն ու նշանակությունը դիալեկտիկական մատերիալիզմի, վորը մեր կուսակցության աշխարհայացքն ե հանդիսանում, վորը բոլշևիկյան ամբողջ թեորիայի հեղափոխական հոգին ե հանդիսանում:

Այժմ վերցնենք այնպիսի որինակ, վորն արդեն վերաբերում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության ժամանակաշրջանին: Յեթ այդ որինակով, վորը տալիս ե պատմակարգային պայքարի կարևորագույն հարցերին

ընկեր Ստալինի դիալեկտիկորեն մոտենալու կլասիկ տիպարներ, մենք մի անգամ ևս կտեսնենք մարքսիստական-լենինյան նախատեսման ամբողջ ուժը, մարքսիստական-լենինյան թեորիայի նշանակությունը: «Համեկ(բ)կ պատմության համառոտ զարդարացի» մեջ հետևյալ կերպ ե բնութագրված համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության՝ վորպես զասակարգի՝ լիկվիդացիայի նշանակությունը.

«Այդ ամենախոր հեղափոխական հեղաշրջում եր, մի թոփք հասարակության հին վորակական կացությունից դեպի նոր վորակական կացությունը, մի հեղաշրջում, վորն իր հետեւանքներով 1917 թվականի հոկտեմբերի հեղափոխական հեղաշրջմանը հավասար նշանակություն ուներ:

Այս հեղափոխության յուրորինակությունն այն եր, վոր այն կատարվեց վերևից, պետական իշխանության նախաձեռնությամբ, վորին ցածրից ուղղակի կերպով ողնությունում ելին գյուղացիների միլիոնավոր մասսաները, վորոնք պայքարում ելին ընդդեմ կուլային ստրկության, հանուն կոլտնտեսային ազտակյանքի:

Նա, այդ հեղափոխությունը, մեկ հարվածով լուծեց սոցիալիստական չինարարության յերկը արմատական հարցերը.

ա) Նա լիկվիդացիայի յենթարկեց մեր յերկրի ամենաբազմամարդ շահագործողական դասակարգը, կուլակների դասակարգը, կազիտալիզմի ուստավրացիայի պատվարը.

բ) Նա կազիտալիզմ ծնող անհատական տնտեսության ուղղուց հասարակական, կոլտնտեսային, սոցիալիստական ուղին փոխադրեց մեր յերկրի ամենաբազմամարդ աշխատավոր դասակարգը.

գ) Նա խորհրդային իշխանությանը սոցիալիստական բազա տվեց ժողովրդական տնտեսության ամենաընդարձակ ու կենսականորեն անհրաժեշտ, բայց ե ամենահետամնաց բնագավառում — գյուղավանտեսության մեջ:

Դրանով իսկ յերկրի ներսում վոչնչացվեցին կապիտալիզմի ռեստավրացիայի վերջին աղբյուրները և դրա հետ մեկեղ ստեղծվեցին սոցիալիստական ժողովրդական տնտեսություն կառուցելու համար անհրաժեշտ նոր, վճռողական պայմաններ»<sup>1</sup>:

Ահա սեղմ, բայց ամենախոր բովանդակությամբ հագեցված՝ կուլակության վորպես դասակարգի լիկվեղացիայի քաղաքականության բնութադրման իմաստը և նշանակությունը, լիկվիդացիա, վորին անցավ մեր կուսակցությունը 1929 թ. կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների աճման կապակցությամբ: Այդ իրադարձություններն իրենց նշանակությամբ հավասարեցվում են այն հեղաշրջման նշանակությանը, վորը տեղի ունեցավ մեր յերկրում 1917 թ. Հոկտեմբերին: Մրանք խոսքեր չեն: Իսկապես, չե վոր մեր Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության ամբողջ բախտը, Հոկտեմբերի բոլոր նվաճումների բախտը, վերջին հաշվով դեմ եր առնում այն հարցին, թե արդյոք մեր յերկրի բանվոր դասակարգը կկարողանա իր ղեկավարությամբ գյուղացիության աշխատավոր մասսաներին անհատական տնտեսության ռելսերից փոխադրել կոլտնտեսային, սոցիալիստական տնտեսության ռելսերի վրա: Հոկտեմբերի բոլոր նվաճումների բախտը դեմ եր առնում այն հարցին, թե արդյոք բանվոր դասակարգը գյուղացիական աշխատավորների ամենալայն մասսաների հետ կիարողանա վոչնչացնել մեր յերկրի ամենաբազմամարդ շահագործողական դասակարգին—կուլակությանը: Հենց այդ բանին եր դեմ առնում մեր սոցիալիստական հեղափոխության ամբողջ բախտը:

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ մեր կուսակցությունը փայլուն կերպով գլուխ բերեց այդ պատմական մեծ խընդիրը: Դժվար է գերազնահատել բազմամիլիոն գյուղացիական մասսաներին սոցիալիզմի ռելսերի վրա փոխադրելու հարցի ճիշտ լուծման նշանակությունը: Նա նշանակությունի վոչ միայն մեր յերկրի ներսում: Նա միջազգային նշա-

1 «Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթաց», եջ 291—292։ Հայքաղջբառ, եջ 411։

նակություն ունի, որինակ ցույց տալով բոլոր մյուս յերկըների բանվոր դասակարգին, հարյութմիլիոնավոր դյուղացիներին, վորոնք անքում են կապիտալիզմի լծի տակ, և ֆեոդալիզմի մնացորդների լծի տակ, ասելով նրանց, վորդեպի յերջանիկ ու ունեոր կյանք տանող միակ ուղին—այդ բանվոր դասակարգի ղեկավարության ուղին և, սոցիալիզմի ուղին և:

«Համկ(բ)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ ասված է, վոր համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիան ամենախորագույն հեղափոխական հեղաշրջում եր, հասարակության վորպական մի վիճակից թոփչք եր մի այլ վորակական վիճակ: Այնուհետև բնութագրվում ե այդ թոփչքի յուրահատկությունը, վորն այն եր, թե այդ հեղափոխությունն անցկացվեց վերևից, պետական իշխանության նախաձեռնությամբ, և պաշտպանվեց ցածրից ժողովրդական միլիոնավոր մասսաների կողմից: Մենք պատմության մեջ մի շարք «վերեկից կատարված հեղափոխություններ» գիտենք, վորոնք անց են կացիել տիրապետող պետական իշխանության նախաձեռնությամբ: Այդ «վերեկից կատարված հեղափոխությունները» եյին, վոր անց եյին կացնում տիրապետող կալվածատերերի ու կապիտալիստների դասակարգերը, «հեղափոխություններ» եյին, վորոնք ուղղված եյին ժողովրդական միլիոնավոր մասսաների շահերի դեմ: Բայց մեղանում հեղափոխությունը վերեկից անց եր կացնում բանվոր դասակարգի դիկտատորայի պետական իշխանությունը և նա ուղղված եր ժողովրդական մասսաների շահերի պաշտպանությանը: Ահա թե ինչու այդ հեղափոխությունը ցածրից արդպիսի նշանավոր աջակցությունը ստացած էր վորակարգի անդամական մասսաների գործությունը: Մեր կուսակցության իմաստուն քաղաքականության ընորհիվ, վոր նա անց եր կացնում մի շարքիսի թոփչքի համար հարկավոր եր այդպիսի թոփչքի համար նախապատրաստել բոլոր համապատասխան պայմանները, հարկավոր եր նախապատրաստել «քանակական» բոլոր անհրաժեշտ փոփոխությունները:

Մեր կուսակցության իմաստուն քաղաքականության ընորհիվ, վոր նա անց եր կացնում մի շարք տարբիների ընդունում՝ այդ թոփչքը նախապատրաստելու համար, չնորթացքում՝ այդ թոփչքը նախապատրաստելու համար,

Հեղ մեր յերկրի ինդուստրացման ու կոլեկտիվացման առաջնանը պլանը կյանքում իրականացնելուն, չնորհիվ այն բանի, վոր կուսակցությունը կարողացավ գեղի գյուղ շարժել նոր տեխնիկա, նոր մարդիկ, կարողացավ գյուղացիության միլիոնավոր մասսաներին ապացուցել կոլտնտեսային առտեսավարության շահագետությունը, չնորհիվ կուլակների արտադրած հացը կոլտնտեսությունների ու խորհանությունների արտադրած հացով փոխարինելու համար մատերիալ պայմանների խելացի նախապատրաստման՝ այդ թոփչքը մեր պետական իշխանությունը կարող եր այդպես փայլուն կերպով անցկացնել ցածրից այդպիսի հզոր աջակցությամբ:

Ամենախոր հեղափոխական այդպիսի հեղաշրջումը, վորպիսին համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիան ե, հաջող անցկացնելու համար, հարկավոր եր կարողանալ ճիշտ ընտրել ժամանակը, նախապատրաստել բոլոր պայմանները, վորոնք անհրաժեշտ ելին այդ թոփչքի համար: Մենք գիտենք, վոր արոցկիստական-զինովյան վավաճանների վոհմակը փորձում եր ապակուլակացման հարց դնել դեռ այն ժամանակ, յերբ ժամանակը չեր հասունացել, յերբ հաջող հարձակման համար դեռ բոլոր պայմանները նախապատրաստված չելին: Այժմ այդ միանդամայն պարզ ե, մենք այստեղ գործ ունեցինք կազմակալվածի անարդ ուստավրատորների պրովոկացիոն, դավաճանական վարքագծի հետ: Կուսակցությունը լենինիդի այդ թշնամիներին հակառակված տվեց:

Ընկեր Ստալինի հանձարի մեծությունն այն ե, վոր նա վորպես դիալեկտիկայի հզոր վարպետ, վոր հիմանալիութեան տիրապետում ե այդ՝ աշխարհում ամենահեղափոխական զենքին, այդ դիալեկտիկան հարստացնելով դասակարգային պայքարի նոր փորձով, անսխալ կերպով վորոշեց այդ թոփչքի սկսման մոմենտը, մի ժամանակ, յերբ կուսակցությանն անհրաժեշտ եր կուլակության սահմանափակման ու արտամղման հին քաղաքականությունից անցնել կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիայի քաղաքականությանը:

64

Այստեղ թույլատրելի կլինի բնել հետևյալ անալոգիան: Հիշենք, թե մաթեմատիկական ինչպիսի ծառությամբ պրոլետարական հեղափոխության հանձար Վլադիմիր Իլյիչ Լենինը 1917 թ. Հոկտեմբերին վորոշեց հասունացած թոփչքի մոմենտը: Հենց 1917 թ. հոկտեմբերի 25-ի նախորյակին Լենինը գրում եր այն մասին, վոր իշխանությունը հարկավոր ե վերցնել հոկտեմբերի 25-ին: Պատմությունը, ասում եր Լենինը, յերբեք չի ների հեղափոխականներին, յեթե նրանք, իշխանությունը գրավելու համար ունենալով բոլոր պայմանները, չեն ոգտվի դրանից: Հապաղումը մահվան ե հավասար, ասում եր Լենինը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության հենց նախորյակին ունեցած իր բոցավառ յելույթների մեջ: Հենց նրա համար, վոր մեր կուսակցությունը զեկավարվում եր այնպիսի առաջնորդների կողմից, ինչպիս Լենինն ու Ստալինն են, նա 1917 թ. հոկտեմբերյան մարտական որերին համաշխարհյին-պատմական հաղթանակ ձեռք բերեց:

Բառացիութեն հենց այդպիսի մաթեմատիկական ծառությամբ ընկեր Ստալինը սահմանում ե այն մոմենտը, յեղք հարկավոր եր ծավալուն ֆրոնտով հարձակման անցնել կուլակության դեմ ե վճռողական մարտ տալ մեր յերկրի կապիտալիստական ամենաբազմարդ դասակարգին: Այդ մեկ անդամ ես վկայում ե մարքսիստական-լենինյան թեորիայի հզոր ուժի մասին, դիալեկտիկական մատերիալիզմի—մարդկացին մաքի այդ մեծագույն նվաճման ուժի մասին, վորին տիրապետում ե բոլշևիկյան կուսակցությունը և վորը նա հարստացնում ե դասակարգային պայքարի նոր փորձի հիման վրա:

Դասակարգային պայքարի հարցերի լուծմանը մարքսիստական, դիալեկտիկական մոտեցում կիրառելու այդպիսի որինակներով ե հաղեցված բոլշևիկյան կուսակցության ամբողջ պատմությունը: Ահա թե ինչու համար «Համկ(ր)կ պատմության համառոտ դասընթացի» մեջ ասված ե, վոր դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի յուրացումը «մեր կուսակցության յուրաքանչյուր ակտիվ գործչի պարտականությունն ե»:

Թարգմանեց Ռ. Փորտուլյան

Հայերեն թարգմ. խմբագիր Բ. Ն. Դավթյան

Տեքստ. խմբագիր Ս. Խոչտարյան

Սըրազրիչ Հ. Մանվելյան

Կոնարու որբադրիչ Լ. Արուլյան

---

Դլավիլակի լիազօր Ա. Ն. — 1849, հրատ. 692

Պատվեր Ա. 94, ամիսաժ 5000

Հանձնվել և արտադրության 8/V 1939 թ.

Սառարադրվել և ապագրելու 5/VI 1939 թ.

Դինը 75 կ.

---

Գևորգաս—Թաղաքական գրականության հրատարակության  
ապարան, Յեղան, Ալլահմէրդյան Ա. 65



13 ИЮНЬ 1986

348

11

ФНБ 75 4.

28703

М. МИТИН

ДИАЛЕКТИЧЕСКИЙ  
МАТЕРИАЛИЗМ—МИРОВОЗЗРЕНИЕ  
МАРКСИСТКО-ЛЕНИНСКОЙ ПАРТИИ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1989